



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

(ՀՄՍՀ Գիտությունների Ակադեմիայի
Պատմության ինստիտուտի ավագ գի-
տական աշխատակից)

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆԶ ՄԱՏՅԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ

La Version Arménienne est, selon
moi, La Reine de toutes les Versions
du Nouveau Testament...

On peut rétablir le Texte Sep-
tante en une infinité d'endroits par
les moyens de cette Version...

M. V. La Croze

Ա. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ԿԱՆՈՆԸ

Համաշխարհային գրականության գլուխ-
գործոցներից մեկն է Աստվածաշունչ մատյա-
նը, որի բազմաթիվ հին թարգմանություննե-
րի շարքում հայկականը բանասիրական համ-
բավ է վայելում որպես «Թագուհի թարգմա-
նութեանց»՝ սկսած ԺԸ դարից։ Հայկական
թարգմանությունը, որը կատարվել է Ե դա-
րում, մեսրոպյան տառերով գրի առնված
առաջին երկն է և հանդիսանում է հայ գրա-
վոր մշակույթի հնագույն հուշարձանը։


Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգ-
մանության մասին մանրամասն տեղեկու-
թյուններ են հաղորդում պատմական աղ-
բյուրները՝ Ե դարի մատենագիրներ Կորյունը,
Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին.
իսկ մեր ժամանակների բանասիրական դրա-
կանության մեջ թարգմանության պատմա-
կան հանդամանքների, նրա լեզվական, բնա-
գրական և այլ հարցերի հետադոտությանն են
նվիրված բազմաթիվ ուսումնասիրություն-
ներ։

Աստվածաշունչ մատյանի հայկական
թարգմանությունն ունեցել է որոշակիորեն
երկու տարբեր հանգրվաններ, կամ, ինչպես
ընդունված է ասել, եղել են երկու թարգմա-

նություններ։ Դրանցից առաջինը, որը մա-
սամբ ասորերեն և մասամբ հունարեն սկզբը-
նագրերից կատարված թարգմանություն էր,
պատկանում է հայկական տառերի գյուտից
(405/406 թ.)՝ մինչև Եփեսոսի տիեզերական
ժողովն (431 թ.) ընկած շրջանին. իսկ երկ-
րորդը, որ նախորդի վերանայումն ու սրբա-
գրումն էր Բյուզանդիոնից ձեռք բերված հու-
նարեն բնագրերի հեռուգրությամբ, պատկա-
նում է Եփեսոսի ժողովին անմիջականորեն
հաջորդող տարիներին։

Առաջին շրջանում՝ Մեսրոպ Մաշտոցը Եդե-
սիայում տառերի գյուտն անելուց հետո՝ անց-
նելով Սամուսատ, որպեսզի այնտեղ հույն
գեղադիր Հոոփանոսի ձեռքով այդ տառերը
յծագրական ձևավորման ենթարկի, այնտեղ
էլ իր աշակերտներից Հովհան Եկեղեցացու և
Հովսեփ Պաղնացու հետ միասին կատարեց
Աստվածաշունչի գրավոր թարգմանության ա-
ռաջին փորձը՝ սկսելով Առակաց գրքից, ինչ-
պես պատմում է նրա կենսագիր Կորյունը.
«Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զԳիրս նախ
յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ
ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լի-
նել, ասելով՝ եթէ 'Ճանաչել զիմաստութիւն՝ և

¹ Երվանդ Տեր-Մինասյան, «Հայոց գրերի գյուտի
մշակների և այլ հարակից խնդիրների մասին», Բան-
բեր Մատենադարանի. Վ՝ 7, Երևան, 1964, էջ 25—48։



վխրատ, իմանալ դրանս չանձարոյ՝ որ և դրեցաւ ձեռամբն այնորիկ գրչիս²։

Այնուհետև Մեսրոպը վերադառնում է Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատ. սկիզբ է դրվում Հայաստանի լուսավորութեան մեծ դործին ո՛չ միայն զայրոցների հիմնադրմամբ և նորագոյն տառերի ուսուցմամբ, այլև թարգմանական եռանդուն գործունեութեամբ։ Առական գրքից հետո՝ Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների աշխատանքով հայացվում են Մովսեսի Հնգամատյանը, մարգարեական գրքերը, Պողոսի և առաքելական ուրիշ թղթեր, ինչպես և ավետարանները։ Այդ մասին է գրում դարձյալ Կորյունը. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն Օրէնսոսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջադէմն Պօղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանան Քրիստոսի միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառ հայերէնախօսք գտան»³։

Սակայն Կորյունի վերոհիշյալ տվյալներն այս շրջանում թարգմանված գրքերի մասին ամբողջական պատկերացում չեն տալիս։ Այդ մասին լրացուցիչ տեղեկություններ մենք գրանում ենք Մովսես խորենացու մոտ, որի համաձայն թարգմանութեան դործը Առակաց գրքից հետո շարունակվել էր՝ «բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն և զնոր Կտակըս»⁴։ Այս տեղեկության հիման վրա մենք պիտի ընդունենք, որ խորենացին այստեղ 22 «յայտնի» գրքեր⁵ ասելիս նկատի ունի Հին

Կտակարանի կանոնը՝ ըստ եբրայականի։ Եբրայական կանոնի համաձայն, ինչպես բացատրված է Հերոնիմոս Ստրիդոնացու կողմից լատինական Վուլգատայի առաջաբանում (Prologus galeatus), Հին Կտակարանի ամփոփվում էր 22 գրքերի մեջ, ըստ որում Դատաւորաց գիրքը և Հուր-ը կադմում էին 1 միավոր, Թագաւորութեանց Ա և Բ գրքերը՝ 1, Թագաւորութեանց Գ և Դ գրքերը՝ 1, Երեմիայի մարգարեությունն ու Ողբ-ը՝ 1, Երկրտասան մարգարէից գրքերը՝ 1, Մնացորդաց Ա և Բ գրքերը՝ 1, Եզրի Բ և Գ (Նէեմի) գրքերը՝ 1. Իսկ հետևյալ գրքերը կադմում էին 1-ական միավորներ. Մեռնող, Ել, Դևտական, Թիմոթեոսյան, Յուդի, Յեսու, Նաւեայ, Նալի, Եգեկիլ, Յոբ, Սաղմոս, Առակ, Ժողովող, Երգերգոց. Դանիէլ և Նաբեթ⁶. որոնց գումարն աւելում էր 22։ Մրանք, դատ-դատ հաշվելով, այն 39 գրքերն են, որոնք մեր այժմյան կանոնում անվանվում են Նախականոն գրքեր։ Միայն պիտի նկատի ունենալ, որ Դանիէլի Գ գլխի 24—30 համարները և ԺԳ ու ԺԴ գլուխներն ամբողջությամբ, ինչպես նաև Եսթերի Ժ գլխի 4 համարից մինչև ԺԶ գլխի 24 համարը եբրայական կանոնում չկան, այսինքն՝ Նախականոն չեն. այդ հատվածները պատկանում են այսպես կոչված Երկրորդականոն գրքերի շարքին։

Վերագրյալ՝ 22 գրքերից բաղկացած կանոնի ծագումը Հայաստանում՝ անշուշտ ասորական Պեղիտտոյից էր՝ որը պարսկական գերիշխանութեան սահմաններում հեղինա-

յական կանոնի ընդգրկած գրքերը՝ մնացածներն առհասարակ պարականոն են համարում և անվանում. մինչ պատմական հնություն ունեցող եկեղեցիները՝ Հունականը, Հայկականը և Հատինականը, եբրայական կանոնում եղածները համարելով Նախականոն գրքեր և Երկրորդականոն անվանելով մի շարք այլ գրքեր, որոնք իրենց կանոններով վավերական են համարվում, պարականոն (տարականոն) են անվանում միայն Նախականոն և երկրորդականոն գրքերի շարքից դուրս մնացածները։ Հաշվի առնելով այս իրողությունը՝ հայկական Աստվածաշնչի մասին խոսելիս պետք է զգույշ լինել պարականոն տերմինի գործածության ժամանակ, թյուրիմացությունների տեղի չտալու համար։

⁶ Հմտ. Հերոնիմոս Ստրիդոնացու «Վասն ի քսան և յերկուս գիրս» ևն, Հանդէս Ամսօրեայ, 1920, էջ 411—428։ Հերոնիմոսի ցուցակը լիովին համապատասխան է եբրայական կանոնին. հմտ. «La Sainte Bible qui comprend l'Ancien et le Nouveau Testament traduits sur les textes originaux hébreu et grec par Louis Segond», nouv. éd., Paris, 1937.

⁷ Եբրայական կանոնի նման՝ նախական Պեղիտտոս ևս չունի Ծոթանասից բնագրի պարունակած երկրորդականոն գրքերը. Rubens Duval, «La littérature syriaque», 3e éd., Paris, 1907, p. 30.

² «Կորիւն. Վարք Մաշտոցի» (հրատ. Մ. Աբեղյանի), Երևան, 1941, էջ 50։

Կորյունի բնագրի այս և հարակից մասերի վերաբերյալ կարևոր դիտողություններ տեսնել՝ Լ. Արևիկյան. «Հայոց հին գրականութեան պատմություն», գիրք Ա, Երևան, 1944, էջ 87—89 (սեպտեմբերյան թարգմանիչներ և թարգմանություններ), 575—588 («Մաշտոցի գործն Եղեկայում և Սամոսատում»)։

³ «Կորիւն. Վարք Մաշտոցի», էջ 56։

⁴ «Մովսիսի խորենացու Պատմութիւն Հայոց» (հրատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի), Թիֆլիս, 1913, էջ 327։

⁵ Մեր մատենագրական աղբյուրներում յայտնի և զաղանի կամ ծածուկ տերմիններով են նշվում Աստվածաշնչի կանոնական (վավերական) և անկանոն կամ պարականոն (անվավեր) կոչված գրքերը։ Այդ մասին մենք արդեն խոսել ենք ուրիշ առթիվ, տե՛ս Ն. Ս. Անասյան, «Հայկական մատենագիտություն և—ԺԸ դդ.», հտ. Ա, Երևան, 1959, էջ 8 և 898—910։

Այս առթիվ նշենք, որ անկանոն կամ պարականոն գրքեր հասկացողությունը երկու տարբեր առումներ ունի. Բողոքականները կանոնական ընդունելով միայն եբրա-

կուսություն էր վայելում Ասորական Եկեղեցու ունեցած քաղաքականապես արտոնյալ դիրքի շնորհիվ: Ըստ երևույթին՝ այսպիսի կանոնի որդեգրման հետևանքով է, որ անհրաժեշտ էր դարձել նաև Հերոնիմոս Սարիզոնացու Առաջարկների թարգմանումը, որը, ինչպես կարծվում է, տեղի ունեցած պետք է լինի Ե դարում հունարենից⁸:

Ինչ վերաբերում է Նոր Կտակարանին՝ նրա կազմի մասին հորինացու տված անդեկուսությունը որոշակի չէ: Կորյունի վերոհիշյալ տեղեկությունն այդ մասին թեև ավելի որոշ է, բայց թերի է: Կորյունից, ինչպես նշեցինք վերևում, միայն հայտնի է, որ թարգմանվել էին Ավետարանները, Պողոսի թղթերը և առաքելական մյուս թղթերը: Բայց թե առաքելական թղթերից որո՞նք էին ընդունելի համարվում այդ ժամանակ, և Նոր Կտակարանի մյուս գրքերը ևս թարգմանվե՞լ էին, թե ոչ, անհայտ է մնում:

Այս մասում մենք պիտի առաջնորդվենք նորից հորինացու թեմազրած ուղիով, ըստ որում՝ եթե Նոր Կտակարանի կանոնն էլ հարկ է որոնել Ասորական Եկեղեցու տղեկություններից, ապա պիտի նշել, որ մեսրոպյան տառերի գյուտի ժամանակաշրջանում ասորիների մոտ գոյություն ունեւ չորս ավետարանների մի հին թարգմանություն, որը Բ դարի հունարեն անտիոքյան բնագիրն էր ներկայացնում և որն այժմ բանասիրության մեջ հայտնի է Նեալեզեխոն դա-Մեփարեբէն անունով: Ռաբուլա-սը, որը Եղեպիայի եպիսկոպոս եղավ 411—435 թթ., այդ թարգմանությունը վերանայեց ու մոտեցրեց հունական անտիոքյան այն բնագրին, որն օգտագործման մեջ էր Ե դարի սկզբներին: Ռաբուլասի կողմից վերանայված այս թարգմանությունը հիմք հանդիսացավ Նոր Կտակարանի ասորական այն խմբագրությանը, որը հայտնի է Պեշիտտո անունով և որի կազմը համալրվեց Ե դարի ընթացքում: Անկախ այն խնդրից, թե հայերեն թարգմանությունները ո՞ր լեզվից էին կատարվել, — ասորերենից, թե հունարենից, — կանոնի հարցում անկասկած ենթարկված էին ասորականին, որի ներկայացուցիչը Պեշիտտոն էր: Նախնական Պեշիտտոն, չորս Ավետարաններից բացի, բովանդակում էր նաև Գործք առաքելոցը, որին կցված էին կաթողիկյա թղթերից երեքը՝ Պետրոս Ա-ը, Յովհաննու Ա-ը և Յակոբի թուղթը. և հուսկ՝ Պո-

լոսի Ա—ԺԴ թղթերը: Նրա կազմում չկային առաքելական մյուս թղթերը և Յայտնությունը-բ. բացակայում էին նաև Ղուկասու ավետարանի ԺԲ գլխի 17—18 տները և Հովհաննու Ավետարանի Ը գլխի 1—11 տները: Ապահովարար այս պատկերն ուներ Նոր Կտակարանի կանոնը նաև Հայաստանում: Այսպիսով՝ Հին և Նոր Կտակարանների հիմնական մասերը հայացվել էին հայկական թարգմանությունների այս առաջին շրջանում, և դա է, որ օգտագործման մեջ էր Հայաստանում մինչև Եփեսոսի տիեզերական ժողովը:

Թարգմանության երկրորդ շրջանն ընկնում է, ինչպես նշեցինք, Եփեսոսի ժողովին հաջորդող տարիներին:

Այս շրջանի դործունեությունը կայանում էր նախկինում կատարված թարգմանությունները վերանայելու և տականքներ լրացնելու մեջ:

Նախկին թարգմանությունները, մեր աղյուսներին հաղորդման համաձայն, համարվում էին «փութանակի»՝ շտաղ կատարված անբավարար թարգմանություններ: Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները Բյուզանդիոնից բերում են Հին և Նոր Կտակարանների վավերական օրինակներ, որոնց հիման վրա ձեռնարկվում է Նոր աշխատանքի կազմակերպմանը: Խոսելով այդ մասին՝ Կորյունն ասում է, որ «երանելոյն Սահակայ... առեալ հանդերձ Եղնակաւ զյառաջագոյն զյանկարծագրիւտ զփութանակի զթարգմանութիւնս՝ հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք»⁹. Իսկ հորինացին ասում է, որ վավերական օրինակներն սառնալուց հետո՝ «առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ զարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նորօք վերստին յօրինեալ նորոգմամբ»¹⁰: Իհարկե՝ հասկանալի է, որ այդ աշխատանքին մասնակցում են մի խումբ թարգմանիչներ:


Բյուզանդիոնից բերված հունարեն բնագրերը, Կորյունի և հորինացու օգտագործած տեքմիներով, հանդիսանում էին հաստատուն, ճշմարիտ և ստույգ օրինակներ: Այս օրինակների որդեգրումը Հայաստանում՝ անհրաժեշտորեն առաջ էր բերում երկու նոր սլահանքներ. նախ՝ վերանայումը նախկին թարգմանության բնագրերի, երկրորդ՝ թարգ-

⁸ Նոր Կտակարանի ասորական խմբագրությունների և հատկապես Պեշիտտոյի մասին տե՛ս՝ Rubens Duval, «La littérature syriaque», p. 37-42.

¹⁰ «Կորյուն. Վարք Մաշտոցի», էջ 76:

¹¹ «Մովսիսի հորինացույ Պատմութիւն Հայոց», էջ 343:

⁸ Տե՛ս Զ. Արիստ. Վարդանյան, «Յերոնիմոսյան վասն ի քսան և յերկուս գիրս առ ի Հեբրայեցոց զպատմութիւնսն բաժանելոյ», Հանդէս Ամսօրեայ. 1920, էջ 365—428; Զ. Ն. Ակիմյան, «Դասական հայերէնը և Վիեննական Մխիթարեան դպրոցը», Վիեննա, 1932, էջ 38:



մանումն այն գրքերի, որոնք նախկին թարգմանության ժամանակ դուրս էին մնացել Հին և Նոր Կտակարանների մինչև այդ ընդունված կանոնից:

Նախկին թարգմանության վերանայման խնդիրը կապ ունի բնագրական հարցերի հետ: Այդ խնդրին կանոնադաշտնաբեկ հետո ինչ վերաբերում է Աստվածաշնչի այն գրքերին, որոնք նոր են թարգմանվել այս շրջանում, ապա այդ մասին պիտի նկատի ունենալ հետևյալը:

Հին Կտակարանի հաստատում, ճշմարիտ և ստույգ օրինակներն ուրիշ բան չէին, եթե ոչ հունական աշխարհում ընդունված Յոթանասնից բնագիրը, որի կանոնը, բացի այն 39 նախականոն գրքերից, որոնք ասորական Պեշիտտոյի կանոնն էին կազմում, ընդգրկում էր նաև այսպես կոչված երկրորդականոն գրքերը՝ Եզրի Ա, Յուդիթ, Տովիթ, Մակաբայեցւոց Ա—Դ, Իմաստութիւն Սողոմոնի, Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաբայ և Բարուք. ինչպես նաև Դանիէլ-ի և Եսթեր-ի գրքերի այն մի բանի հատվածները, որոնք բացակայում էին Պեշիտտոյի կանոնում¹², ինչպես նշեցինք վերևում: Յոթանասնից կանոնի այս գրքերն էին, որ նոր թարգմանվեցին հայերենի¹³, ըստ երևույթին՝ բացառությամբ Մակաբայեցւոց Դ գրքի, որի թարգմանության հետքեր չեն նկատվել հայ մատենագրության մեջ¹⁴: Դրանց մեծ մասը Ե գրքի

հայ հեղինակների երկերում օգտագործվել և կամ հիշատակվել են արդեն՝ և միայն մի քանիսն են, որ չեն հիշատակվել Յուդիթ, Մակաբայեցւոց Դ և Բարուք. բայց այս կամ այն գրքի ինչպես հիշատակումը, այնպես և հիշատակված չլինելը գրականության մեջ՝ անշուշտ լուր Կատահականություն է: Այնուհանդերձ՝ այդ խնդրի վրա կարելի է որոշ լույս սփռել կանոնական որոշումների օգնությամբ, այն որոշումների, որոնք միշտ էլ ընդունված են եղել քրիստոնեական եկեղեցիների կողմից թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում. մեղ մոտ՝ Եփեսոսի ժողովից հետո, երբ նրանք բերվեցին Հայաստան: Մենք նկատի ունենք նախ «Կանոնը Կղեմայ» (կամ «Սահմանը և կանոնը սուրբ առաքելոցն» ի ձեռն Կղեմայ, առաքել հեթանոսաց») կոչված և, ապա այն, որը հայտնի է «Կանոնը Հառգիկեայ» անունով: Այս երկու կանոնախմբերի վերջին հոդվածները նվիրված են Աստվածաշնչի կանոնի ճշտմանը, Կղեմայն խմբում՝ ՁԵ հոդվածը, իսկ Հառգիկեի խմբում՝ Կ հոդվածը (ըստ հունարեն բնագրերի): Մենք ունենք այս կանոնախմբերի հայերեն հին թարգմանությունները, որոնք Ե գրքից են, բայց ստիպված ենք դիմել նրանց հունարեն բնագրերին, որովհետև հայերեն թարգմանություններն այս մասում այլալված են և չեն օգնում գործին:

Կղեմայն ՁԵ հոդվածն իր ընդհանուր բնույթով արդեն Յոթանասնից կանոնն է ար-

¹² Հմմտ. The Old Testament in Greek according to the Septuagint; edited... by Henry Barclay Swete, vol. I-III, Cambridge, University Press, 1887-1894.

Այս հրատարակությունը հետագայում կնշենք „Sept.“ ձևով:

¹³ Որպես բացառություն՝ Դանիելի գրքի թե՛ նախկինում թարգմանված մասերի վերանայումը և թե՛ նոր մասերի թարգմանումը եղել է ոչ թե հունարեն Յոթանասնից թարգմանության հիման վրա, այլ Բեռլոտիոնի հունարեն թարգմանության, որովհետև այդ գրքի Յոթանասնից հունարենը քրիստոնեական աշխարհում առհասարակ համարվում էր շատ թերի. տե՛ս և հայկականի հետ հմմտ. Յոթանասնից և Բեռլոտիոնի բնագրերը զուգահեռաբար՝ The Old Testament in Greek according to the Septuagint, vol. III, p. 498-593.

¹⁴ Մակաբայեցւոց Դ գիրքը երբեք կանոնական չի համարվել հույն, հայ և լատին եկեղեցիների կողմից: Այդ գիրքը հիշատակվում է է դարում Անանիա Երազմացու կազմած ցուցակում (սթիք որչափովեան տանց Հին Կտակարանաց), տե՛ս Հանդէս Ամսօրեայ, 1908, էջ 21: Հիշատակվում է նաև ԺԲ դարում Հովհաննես Սարկավազի կողմից կարգավորված գրքերի ցուցակում (Կարգագրութիւնք գրոց սրբոց որք ստուգարանեցան ի Սարկավազ վարդապետէն), տե՛ս հետևյալ երկում. «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական»

(հատ. Բ. Պատկանյանի), Պետերբուրգ, 1866, էջ 35: Սակայն Մխիթար Այրիվանեցին իր հայտնի Ճառքնություն, Աստվածաշնչի գրքերն ընդօրինակելիս, Մակաբայեցւոց Դ գիրքն ավարտելուց հետո անում է հետևյալ նշումը. «Ջլորորդ Մակաբէացիսն ոչ գտի», տե՛ս՝ Երեւմանի Պետ. Մատ. ձեռ. N° 1500, էջ 230ր: Այս նշումով նա ուզում է ասել, որ Սարկավազյան ցուցակից իրեն հայտնի եղող այդ գրքին չի պատահել:

¹⁵ Հմմտ. Месроп Тер-Монсесян, „История перевода Библии на армянский язык“, Петербург, 1902, стр. 191-192. Իհարկե չի բացասվում, որ նրանցից մի քանիսը օգտված լինեն հին փոթականի թարգմանությունից:

¹⁶ Հունարեն բնագիրը տե՛ս՝ Ch.-J. Héféle, „Histoire des Conciles d'après les documents originaux“, t. I, Paris, 1869, p. 643-644 (ՁԵ հոդվածը): Կղեմայն կանոնախմբի հայերեն թարգմանությունն ամբողջությամբ տե՛ս «Կանոնագիրք Հայոց» (հրատ. Վազգեն Հակոբյանի), հտ. Ա, Երևան, 1964, էջ 67—100, բայց խնդրո առարկա հոդվածը բացակայում է այնտեղ: Ընկնելով իր տեղից՝ այդ հոդվածը անցել է «Հարանց հետևողաց» կանոնախմբին և կցվել է նրա վերջին՝ ԻԷ հոդվածին, տե՛ս՝ անգ. էջ 112—113: Նույն հոդվածը պատահաբար կցված ենք գտնում նաև Պարտավի ժողովի որոշումների վերջին՝ ԻԴ հոդվածին, տե՛ս՝ «Կանոնը Պարտավի ազգային ժողովի» (հրատ. Ա. Ղյուճյանի),

տահաշատում, Այնտեղ որպես կանոնական հիշատակվում է նախ Յուդիթ-ը՝ «Յուդիթայ»¹⁷ / գիրք»։ Բայց նաև ուրիշ կողմից հայտնի է, որ նիկիայի ժողովի գործերում այդ գիրքը հիշատակության է արժանացել կանոնական գրքի հանգամանքով¹⁸։ Այնուհետև Կղեմյան հոգևածում հիշատակվում են նաև Մակարայեցուց գրքերը՝ «Մակարայեցուց 3 գիրք»։ Նշանակում է՝ Ա. և Բ. գրքերի հետ միասին Գ. գիրքը ևս կանոնական էր համարվում նաև Հայաստանում։ և մեր կարծիքով դրա պայցույցներից մեկն էլ այն է, որ Լավոդիկյայի հոգևածում (հունարեն) թեև Մակարայեցուց գրքերից ոչ մեկի մասին հիշատակություն չկա, — և չէր էլ կարող լինել, որովհետև Լավոդիկյան հոգևածոր երրայական կանոնն է արտահայտում, այսինքն՝ նախականոն գրքերն է միայն թվարկում, — բայց նրա հայերեն բնագրում թարգմանիչը մուծում է կատարել «Մակարայեցիք» անորոշ ձևով¹⁹, անշուշտ նկատի ունենալով միաժամանակ երեք գրքերը և զգալ տալով, որ դրանք ևս ընդունելի են հայերի համար, Լավոդիկյան Կ հոգևածից հայեր գիտեին, որ կանոնական է նաև Բարսեղ-ը²⁰։ Սրանք էին Հին Կտակարանի նոր թարգմանված գրքերն այս շրջանում²¹։

Վաղարշապատ, 1905, էջ 26։ Այս մասին տե՛ս՝ Մովսէս (Նորայր եպս. Պողոսյան), «Պարտաւի ժողովի կանոններուն վերջին յօդուածը», Սիոն. 1944, էջ 26—27։ Թյուրիմացության մեջ են եղել այն ուսումնասիրողները, որոնք, Աստվածաշնչի կանոնական հարցերի մասին խոսելիս, հիշալ հոգևածը համարել են Պարտաւի ժողովի որոշում։

¹⁷ Ch.-J. Héféle, «Histoire des Conciles...», t. I, p. 361-362.

¹⁸ Լավոդիկի ժողովի Կ հոգևածի հունարեն բնագիր տե՛ս՝ Ch.-J. Héféle, «Histoire des Conciles...», t. II, Paris, 1869, p. 165-166.

Այս հոգևածը Լավոդիկի ժողովի կանոնների հայերեն թարգմանության մեջ, ուր դարձել է Մե հոգևած, ազգավազել է և կորցրել իր դեմքը, տե՛ս՝ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, էջ 241։

¹⁹ Հին Կտակարանի Լավոդիկյան կանոնը, լիովին համապատասխան երրայականին, որի մասին մենք խոսեցինք վերևում, ընդգրկում էր 22 գիրք՝ միայն մի փոքրիկ շեղումով. այստեղ Երեմիայի մարգարեությանը կցորդված է ոչ միայն Երեմիայի Ողբը, ինչպես պահանջում էր երրայականը, այլ նաև Բարուքն ու Երեմիայի Թուղթը («Թուղթ առ գերեալսն ի Բաբելոն»)։ Լավոդիկյան այս շեղումն անշուշտ արգելում էր այդ ժամանակներում Հին Կտակարանի գրքերի կանոնականության շուրջ եղած տարաձայնություններին։

²⁰ Նոր թարգմանված այդ երկրորդականոն գրքերի հարցում վրիպում գոյություն ունի Բարսեղ վրդ. Թոփանյանի մի հոգևածում՝ «Հայերէն Հին Կտակարանի պաշտական գրքերը», Սիոն, 1966, էջ 273—276։ Ոգտա-

Իսկ որո՞նք էին Նոր Կտակարանի այն գրքերը, որոնք նոր թարգմանվեցին։ Այստեղ խնդիրը վերաբերում է միայն կաթողիկոս թղթերին, որովհետև Յայտնուրեան գիրքն այս շրջանում դեռ ճանաչում չունեի ինչպես ասորական եկեղեցու, այնպես և բյուզանդական պաշտոնական կանոնում։ Պեշիտոտյի կանոնով հայերը գիտեին, ինչպես նշեցինք, կաթողիկոս թղթերից միայն երեքը. մնացած չորսը երկրային գրքերի շարքին էին դասվում և այժմ էլ հայտնի են երկրորդականոն գրքեր անունով. դրանք էին՝ Պետրոսի Բ-ը, Յովհաննու Բ և Գ թղթերը, ինչպես և Յուդայի թուղթը։ Արդ՝ այս երկրորդականոնները թարգմանվել էին այս շրջանում, ժամանակակից հեղինակներից Եղնիկ Կողբացու մոտ վկայակոչումներ կան Պետրոսի Բ և Հուդայի թղթերից²²։ Այս փաստը ցույց է տալիս, որ հայերը Նոր Կտակարանի Պեշիտոտյի սահմանից դուրս էին եկել՝ ընդգրկելով նաև երկրորդականոն գրքերը, որոնց թվում, իհարկե, նաև Հովհաննու Բ և Գ թղթերը։ Արդեն

գործելով մի քանի բողոքական և ևստար ուսումնասիրություններ, որոնց մոտեցումը կանոնականության հարցերում խոտոր է համեմատվում հայ բանասիրության գնահատումների հետ, հոգևածագիրը պարականոն է անվանում հայոց երկրորդականոն գրքերը։ Դրա հետ միասին՝ նա մեր եզրաւ Ա-ն անվանում է եզրաւ Բ. իսկ պարականոն եզրաւ Գ անվանածը հավանաբար եզրաւ Դ կամ եզր-Սաղարիկ կոչվածն է, եթե նկատի ունենանք, որ միայն սա է հայկական կանոնից դուրս մնացած եզրաւ-ը. մեղ մոտ եզրաւ Գ է անվանվում Նեմ-մի-ն, Բացի այդ՝ հոգևածագիրը Թյուրիմացաբար հայկական կանոնից դուրս մնացած է համարում հետևյալները. Եսթեր Բ. Ուղանեա (ուղեւ)՝ Շուշան), Եզ Երեց Երեց մանկանց և Պատմութիւն Ռեյալ և՝ վիշապի։ Սրանք բոլորն էլ կան հայկական կանոնում՝ որպես երկրորդականոն մասեր. նրանցից առաջինը մեր սեփերի գրքի Ժ զլիսի 4—13 տները և ԺԱ—ԺԶ գլուխներն է կազմում. երկրորդը՝ Դանիելի գրքի ԺԳ գլուխն է կազմում. երրորդը՝ Դանիելի ԺԴ գլուխն է կազմում։ Պետք էր զգուշ լինել օտար ուսումնասիրությունների հիման վրա հայկական կանոնի մասին եզրակացություններ անելիս։

²¹ М. Тер-Мозесян, «Ист. пер. Библии на арм. яз.», стр. 192.

²² Հովհաննու Բ և Գ թղթերի մասին պետք է նաև նկատի ունենալ, որ նրանք «ի հնումն աս հասարակ իրեր յանելուած յարեալ լինէին յԱռաջին Թուղթն», տե՛ս հետևյալ հրատարակությունը. «Յայտնութիւն Յովհաննու, հին հայ թարգմանութիւն, զառաջինն ած ի լոյս... Ֆրէտէրիք Մուրատ», Երուսաղեմ, 1905—1911, ներածութիւն, էջ ՄԿԴ։ Ուստի և տարօրինակ չէ, որ նրանք մեր աղբյուրներում առանձին չեն հիշատակվել մանավանդ որ ծավալով էլ շատ փոքր են։



հնարավոր էլ չէր, որ վերջիններս բացառությամբ կազմեին, եթե նկատի ունենանք, որ նոր Կտակառանի այն հաստատում, հշմարիտ և ստոյգ օրինակները, որոնք կատարվող աշխատանքների հիմքն էին կազմում, ուրիշ բան չէին, բայց եթե պաշտոնապես վավերական ճանաչված այն բնագրերը, որ Դ դարում Եվսեբիոս Կեսարացին պատրաստել էր Բյուզանդական եկեղեցու օգտագործման համար, իսկ Եվսեբիոս Կեսարացու կանոնը լրիվ բովանդակում էր կաթողիկոս յոթ թղթերը²³։ Դեռ չենք խոսում այն մասին, որ Կղեմյան և Լավոդիկյան հոգվածները նույնպես կանոնական էին համարում այդ թղթերը²⁴։

Կորյունը, որն իր երկը գրի է առել 443—451 թվականների միջև, առաքյալների «բաշուխյունները» (առաքինությունները) դրվատելիս դրում է հետևյալ տողերը. «Տեսանել զոմանց [զբաշուխյունս] ի սուրբ Անտարանին և զոմանց ի Գործս Առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենագրեալ. և իցեն որ ի Կաթողիկէս Առաքելոցն առաւելագոյնս ճանաչին. այլ սրբոյն Պապոսի շորեքտասանեքումբ բղթովք պատմէ դիւր առաքելակիցս և նիղականիցս»²⁵։

Այս տողերն արտահայտում են նոր Կտակարանի կանոնական համարված գրքերի առկայությունն ու դասավորությունը Հայաստանում. նույնիսկ թարգմանիչների օրով։ Այստեղ ընդգրկված գրքերի գումարը համապատասխանում է նաև նոր Կտակարանի հայկական այժմյան կանոնին, բացառությամբ Հայտնության գրքի, որը հետագայում է միայն ավելացել կանոնի վրա։

Այսպիսով տեսնում ենք, որ Հին և Նոր Կտակարանների հայերեն թարգմանությունները, թե՛ նախնիների հայերեն թարգմանության շրջանում, հիմնված էին պաշտոնական կանոնների վրա։ Աստվածաշունչ մատյանը, ինչպես ամեն տեղ, այնպես և Հայաստանում, չէր պատկերացվում առանց կանոնի. այդ պատճառով էլ Ղազար Փարպեցին իր հայտնի թղթում, իր ժամանակի տգետներին մեղադրելիս, նշում էր, որ նրանք Աստվածաշնչի գրքերի անուններն ու թիվն անգամ կարգին չգիտեն. «Իսկ այժմ յուրվք ի լիրբ մա-

խողաց՝ և ղանուանս անգամ և կամ ղբանսնութիւնս կանոնեալ եկեղեցական գրեւնու հուղիւ կարեն գիտել»²⁶։

Այս բոլորից երևում է, որ Ե դարի առաջին կեսում մենք ունենք, երկրորդ՝ վերանայված ու լրացված թարգմանություն, կանոնյալ Աստվածաշունչ մատյանը, որի բնագիրը հասել է մինչև մեր օրերը և հանդիսանում է հայկական Աստվածաշնչի ընկալյալ բնագիրը։

Բ. ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ

Ընկալյալ բնագրի օգնությամբ կատարված բանասիրական հետազոտությունների արդյունքով այսօր կարելի է գաղափար կաղմել Ե դարի առաջին երկրորդ թարգմանությունների էության մասին։ Այլ խոսքով՝ այսօր արդեն փաստական նյութերի հիման վրա կարելի է տեսնել երկու թարգմանությունների որոշակի ղանադանությունը։ Ուսումնասիրությունները հնարավորություն են տվել մի կողմից թարգմանական որոշ բնագրերի մեջ հաստատելու թարգմանությունների առաջին շրջանում օգտագործված ասորերեն և հունարեն սկզբնագրերի առկայությունը, իսկ մյուս կողմից որոնելու հայկական բնագրերի աղբյուրություններն իրենց սկզբնագրերի հետ։

Վաղուց էր նկատվել Աստվածաշնչի որոշ գրքերի տարբեր թարգմանությունների գոյության փաստը։

Դեռևս Թ դարում Թովմա Արծրունին Խոթեցիների մասին գրում էր, թե նրանք «դիտեն զսաղմոսսն զհին թարգմանեալսն վարդապետացն Հայոց, զոր հանապաղ ի բերան ունին»²⁷։ Իհարկե՝ հնարավոր չէ հաստատորեն ասել, թե ի՞նչ էր հասկանում պատմագիրը «հին թարգմանեալ» ասելով, բայց հավանական է, որ խոսքը նախնիների շրջանի թարգմանության մասին է։

Մեր օրերում բանասիրությունը զգալի նվաճումներ է կատարել նման հարցերի բնագավառում։

Հին Կտակարանի կապակցությամբ՝ Հ. Հովհաննես Զոհրապյանը 1805 թ. իր հրատարա-

²³ Տե՛ս Ֆր. Մուրատի ներածությունը, անդ, էջ ՄԺԸ—ՄԻԷ։

²⁴ Ch.-J. Héféle, «Histoire des Conciles...», t. I, p. 643-644; t. II, p. 165-166.

Կղեմյան հոգվածի այն մասը, որը նոր Կտակարանին է վերաբերում, անհետ կորած է հայկական թարգմանության մեջ. իսկ Լավոդիկյան հոգվածի այդ մասը հարադատորեն պահված է, տե՛ս՝ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, էջ 241։

²⁵ «Կորին. Վարք Մաշտոցի», էջ 32։

²⁶ «Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան» (հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի), Թիֆլիս, 1901, էջ 201։

²⁷ «Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբուրգ, 1887, էջ 121։

Ֆ. Կ. Կոնիքիը կարծում է, որ այս վկայությունը վերաբերում է նախամեսրոպյան շրջանին պատկանող մի անգիր թարգմանության, տե՛ս՝ «The Key of Truth; a manual of the Paulician church of Armenia» (հրատ. F. C. Conybeare-ի). Oxford, 1898, p. LXV. Բայց հիմք չկա՝ այսպիսի կարծիքի հանգեցնել։

կած Աստվածաշնչի առաջաբանում նշում էր, որ ձեռագրերում նկատելի են Առակաց, Ժողովողի և Երդ երդոցի այլևայլ թարգմանություններ²⁸:

Հենվելով բնագրական ցուցումների վրա՝ Ժողովողի գրքի կրկին օրինակների գոյության փաստի մասին ուշադրություն են հրավիրել նաև նորայր Բյուզանդացիներ²⁹ և Հ. Ն. Ակիբյանը³⁰, վերջինիս կարծիքով Ժողովողի գրքի ինչպես սրբագրված (երկրորդ թարգմանության) օրինակը, այնպես և սկզբնական (առաջին թարգմանության) օրինակը հունարեն բնագիր է ցույց առնում:

Մովսիսյանը (նորայր եպս. Պողոսյան) Ժողովողի բնագրի մասին համեմատություններ է կատարել Ոսկան Երևանցու և Հ. Հ. Զոհրապյանի հրատարակած բնագրերի միջև, որից և հանգել է այն համոզման, թե «մեր առջև ունինք Ժողովողի երկու հին և ուրոյն թարգմանություններ»³¹, թե ուսումնասիրողը այդ երկու թարգմանություններից ո՛րն է համարում նախնական՝ այդ մասին ոչինչ չի ասում:

Հ. Հ. Ոսկյանը Երդ երդոցի սովորական բնագրի հետ միասին լույս է ընծայել մի նոր օրինակ, որը համարվում է առաջին շրջանի թարգմանություններից. հրատարակչի գնահատությամբ՝ «այս նորագիտ բնագիրը ուղղակի յունարենի վրայէն եղած թարգմանութիւն մըն է և այն՝ նախնական թարգմանութիւն մը»³²:

1890-ական թվականներին Գրիգոր Խալաթյանցի հրատարակությամբ գիտական աշխարհին հայտնի դարձան Մնացորդաց Ա և Բ գրքերի այնպիսի օրինակներ, որոնք տարբերվում են սովորական բնագրից և ընդունվում

վեցին որպես ասորերենից կատարված հին թարգմանության մնացորդներ³³:

Այսօր հայտնի է, որ Սիրաքը ևս զույլություն ունի հնագույն երկու թարգմանություններից. դրանցից մեկը Զոհրապյանի հրատարակությունն է³⁴, իսկ մյուսը՝ Հ. Ա. Բազրատունին՝ ինքը՝ այս երկու բնագրերը համարել է Սահակ-Մեսրոպյան շրջանի առաջին և երկրորդ թարգմանություններ³⁵, Ակիբյանը ևս, Սիրաքը համարելով այն գրքերից, որոնք «հասած են մեղի թէ՛ փութանակի թարգմանութեամբը և թէ՛ անոր սրբագրեալ օրինակովը», ասել է, որ փութանակի թարգմանությունը Զոհրապյանի հրատարակածն է, իսկ սրբագրված օրինակը՝ Բազրատունու հրատարակածը³⁷: Մենք, ընդունելով, որ այստեղ իրոք գործ ունենք Սահակ-Մեսրոպյան շրջանի երկու տարբեր թարգմանությունների հետ, կփափաքենք մի ճշտում անել: Այնքանով, որքան հայտնի է, որ նախնական թարգմանությունների շարքը, ինչպես տեսանք վերևում, միայն նախնական գրքերն էր ընդգրկում՝ ըստ Պեշիտտոյի կանոնի, ապա նրանց մեջ չէր կարող գտնվել Սիրաքը. սակայն բացառված չէ, որ մեր թարգմանիչներն արտականոն որոշ գրքեր ևս թարգմանած լինեն, այդ թվում նաև Սիրաքը: Այդպիսի փաստեր մենք ունենք նաև նոր Կասականի թարգմանություններից, օրինակ՝

³³ Ի. Խալաթյանց, «Մի կարևոր գիտ. Մ. էջմիածնի Մատենադարանում. Ա և Բ Մնացորդաց գրքերի ասորերենից հայ թարգմանությունը», Արարատ, 1896, էջ 311—317, նույն, «Գիրք Մնացորդաց ըստ նադոյն հայ թարգմանութեան», Մոսկվա, 1899:

³⁴ «Աստուածաշունչ մատենան» (միատորյակ), Վենետիկ, 1805, հավելվածի էջ 2—12:

³⁵ Հրատարակել է նախ առանձին՝ «Լիմաստություն Յեսուայ որդու Սիրաքայ և Թուղթ Երեմիայ մարգարէի առ գերեալսն ի Բաբելոն», Վենետիկ, 1833, էջ 11—153. և ապա՝ Աստվածաշնչի կազմում՝ «Գիրք Աստուածաշունչ Հին և Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1860, էջ 681—704:

³⁶ Տե՛ս վերոհիշյալ «Լիմաստություն Յեսուայ որդու Սիրաքայ», էջ 6—8:

³⁷ Հ. Ն. Ակիբյան, «Սուրբ գրքի այնքան թարգմանությունը», էջ 559 և 561:

²⁸ «Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց» (միատորյակ), Վենետիկ, 1805, էջ 6:

²⁹ Նորայր Բյուզանդացի, «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնը», Թիֆլիս, 1900, էջ 384, ծան.:

³⁰ Հ. Ն. Ակիբյան, «Սուրբ գրքի այնքան թարգմանությունը», Հանդես Ամսօրեայ, 1935, էջ 560—561:

³¹ Մովսիսյան, «Ժողովողի հին հայ թարգմանություններ», Սիոն, 1936, էջ 45—48:

³² Հ. Հ. Ոսկյան, «Երդ երդոցի առաջին և երկրորդ թարգմանությունը. Ուսումնասիրություն և բնագիր», Վիեննա, 1924:



Կորնթացիոց Գ թուղթը և նրա պատասխանը, որոնք Պ. Ֆետտերի կողմից համարվել են ասորերենից կատարված թարգմանությունների նախնական ստանդարտի շրջանում³⁸,

Անցնենք նոր Կտակարանին:

Նոր Կտակարանի այժմյան՝ ընկալյալ բնագրում ևս բանասիրությունը նշել է ասորերենի բազմաթիվ հետքեր:

Ֆ. Կ. Կոնիբերը ասորերենից կատարված հին թարգմանությունների մի բեկոր է համարում Մարկոսի Ավետարանի վերջի 9—20 տները, այն հատվածը, որը կրում է Արիստոն Երեցու անունը³⁹:

Ֆ. Մակլերը Ավետարանի յոթ ձեռագիր օրինակների օգտագործմամբ մի քանի հատվածներ համեմատելով հունական և ասորական բնագրերի հետ, հանգում է այն կարծիքին, թե թարգմանությունը հունարենից է կատարվել, բայց և գիտել է տալիս ասորականի հետ մոտիկության կամ համաձայնության կետեր՝ դրանք համարելով ասորերենից կատարված հնագույն թարգմանության մնացորդներ⁴⁰:

Ավգ. Մերկը հայերեն Ավետարանների մեջ մատնացույց է արել ասորաբանություններ, որոնք, նրա կարծիքով, կարող են լինել ասորերենից կատարված մի նախկին թարգմանության մնացորդները, եթե չենթադրենք, որ հունարեն բնագրից թարգմանողը ձեռքի տակ ունեցել է նաև մի ասորերեն բնագիր՝ որոշ համեմատությունների համար⁴¹:

Այս խնդրում օժանդակ նյութեր է տալիս նաև Աստվածաշնչի վրացերեն հնագույն թարգմանությունների բնագրական հետազո-

տությունը: Հայտնի արևելագետների ուսումնասիրություններով (Ն. Մառ, Հ. Գուսն, Թ. Կլուգե, Ռ. Բլեյկ, Կ. Լեյկ, Ս. Նյու, Ս. Լիոնե, Ժ. Գարիտ, Լ. Լրլուար և այլն) ապացուցված է, որ վրացերեն Աստվածաշունչը սկզբնաբար հայերեն բնագրից է թարգմանված եղել, իսկ ոչ միայն Աստվածաշունչը, այլև վարքագրական և այլ կարգի երկեր: Բայց է դարից սկսած, երբ Վրացական Եկեղեցին պաշտոնապես բաժանվել է Հայկականից և, անցնելով բյուզանդական քաղկեդոնականության դիրքերին, պայքար է սկսել միաբնակ Հայ Եկեղեցու դեմ, մոլեռանդորեն աշխատել են ջնջել ու վերացնել գրավոր այն բոլոր հետքերը, որոնք կարող էին հիշեցնել անցյալի հայկական ազդեցությունը: Այս կերպով՝ նաև Աստվածաշնչի վրացերեն թարգմանությունը, որը հայերենից էր կատարվել, սրբագրության է ենթարկվել հունական բնագրերի հիման վրա: Այնուհանդերձ բանասիրությունն այսօր հայտնաբերում է հայկական սկզբնագրերի հետքերը:

Ն. Մառը անցյալ դարի վերջերին վրացերեն Հին և Նոր Կտակարանների հնագույն օրինակների ուսումնասիրությամբ եկել էր այն եզրակացության, որ նրանց հիմքում ականերկորեն առկա են ասորական ծագում ունեցող հայերեն բնագրեր⁴², Ռ. Բլեյկը ևս, Մարկոսի Ավետարանի ուսումնասիրությամբ, գտնում էր, որ վրացերենը գալիս է ասորերենից առաջացած մի հայերեն բնագրից⁴³, Նմանապես, Ժ. Գարիտի ուսումնասիրության համաձայն, գոյություն ունեն Գործք առաքելոցի վրացերեն օրինակներ, որոնք կապ ունեն ասորական մի բնագրից թարգմանված հայերենի հետ⁴⁴:

Վրացական թարգմանությունների հետ կապված նման փաստեր դեռ շատ կան, նրանց թվում նաև այնպիսիներ, որոնք մատ-

³⁸ «Հայկական ուսումնասիրությունը հայագետ Պ. Ֆլեթրի, ի մի ամփոփում և թարգմանած» (Հրատ. Հ. Հ. Տաշյանի), Վիեննա, 1895, էջ 142—193:

³⁹ F. C. Conybeare, „Arlston, the author of the last twelve verses of Mark“, The Expositor, 4th series, vol. VIII, 1893, p. 241-254. Idem, „The authorship of the last verses of Mark“, The Expositor, 4th series, vol. X, 1894, p. 219-232. Idem, „On the last twelve verses of St. Mark's Gospel“, The Expositor, 5th series, vol. II, 1895, p. 401-421.

⁴⁰ F. Macler, „Le texte arménien de l'Evangile d'après Matthieu et Marc“, Paris, 1919.

⁴¹ Aug. Merk, „Die armenischen Evangelien und ihre Vorlagen“, Biblica, VII, 1926, S. 40-72.

⁴² Н. Я. Марр, „Из поездки на Афон“, Журнал Министерства Народного Просвещения, ч. CCCXXII, 1899. № 3, отд. 2, стр. 12-15.

⁴³ R. P. Blake, „The old georgian version of the Gospel of Mark“, Patrologia Orientalis, vol. XX, 1928, p. 439-574.

⁴⁴ G. Garitte, „L'ancienne version géorgienne des Actes des Apôtres d'après deux manuscrits du Sinai (Bibliothèque du Muséeon 38), Louvain, 1955,

նացույց են անում ոչ միայն ասորերենից թարգմանված հայերեն բնագրեր, այլև հունարենից թարգմանված հայերեն բնագրեր, որոնք պատկանում են հայկական թարգմանությունների նախնական ստանդարտի շրջանին:

Այս բոլորը վերաբերում են հայկական թարգմանությունների առաջին և երկրորդ շրջաններին պատկանող լուսագրերի զանազանության հարցին:

**Գ. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԿԶՐԱՆԱԳՐԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏՔԵՐՆ
ԱՅԺՄՅԱՆ ԲՆԱԳՐՈՒՄ**

Հայկական թարգմանություններին հիմք ձևող սկզբնագրերի հարցում հիմնական դերը կատարել են Հին և Նոր Կտակարանների հունական զանազան խմբագրությունները⁴⁵, որոնցից մի քանիսը, ինչպես Անտիոքյանը և Կեսարյանը, տարածված էին նաև ասորական աշխարհում՝ ասորերեն թարգմանությամբ:


Այդ խմբագրությունների շարքում առաջին տեղը զբաղում էր այսպես կոչված Ռոգինյան բնագիրը, որը կազմվել էր Գ զարում և վերաբերում էր Հին Կտակարանի Յոթանասնից թարգմանության վերանայմանը: Հաշվի առնելով, որ Յոթանասնից թարգմանության բնագիրն իր գոյության ավելի քան հինգ դարերի ընթացքում այլալուծման ու զգալի աղավաղումների էր կրել, Ռոգինյան Աղեքսանդրացին այն վերանայեց իր ժամանակի եբրայական բնագրի հիման վրա, այդ նպատակի համար օգտագործելով Բ զարում Ակյուղասի, Սիմաքոսի և Թեոդոտիոսի ձեռքով եբրայերենից կատարված հունարեն նոր թարգմանությունները: Ռոգինյանի աշխատությունը բնագրերի մի համագրություն էր՝ ամփոփված վեց սյունակներում: 1. Եբրայական բնագիրը՝ եբրայական տառերով: 2. Նույն բնագիրը՝ հունական տառադարձությամբ: 3. Ակյուղասի թարգմանությունը: 4. Սիմաքոսի թարգմանությունը: 5. Յոթանասնից բնագիրը՝ վերանայված Ռոգինյանի կողմից: 6. Թեոդոտիոսի թարգմանությունը, որը, համարվելով մի տեսակի տղատ թարգմանություն, վերջում էր գրված: Այս աշխատությունը կոչվում էր Վեցիցյան՝

վեցսյունակյան՝ Վեցածալ (Hexapla). կար նաև՝ այստեղից առաջին երկու սյունակների վերացմամբ կազմված մի օրինակ, որը հայտնի էր Քաոիջյան՝ Քառասյուն՝ Չոբեֆյան՝ Չոբեֆյունակյան՝ Չոբեֆկնի (Tetrapla) անունով: Ուրեմն Յոթանասնից թարգմանության Ռոգինյան վերանայված բնագիրն այս աշխատության վերջին թեր սյունակն էր, որի վրա Ակյուղասի, Սիմաքոսի և Թեոդոտիոսի թարգմանություններից ավելացված էին եբրայական բնագրի այն հատվածները, որոնք պակասում էին Յոթանասնից հին բնագրում և այդ ավելացումները նշանակված էին ասաղանշերով (Ⲱ). իսկ Յոթանասնից բնագրի այն հատվածները, որոնք չկային եբրայական բնագրում, նշանակված էին բրգածև նշաններով (Ⲁ կամ —): Բացի այդ՝ Յոթանասնից թարգմանությունը նաև որոշ ուղղումների էր ենթարկված մյուս թարգմանությունների հիման վրա:

Ռոգինյանի հետո, Դ զարում, հանգև էին եկել Հին և Նոր Կտակարանների հունարեն բնագրերի ուղղագրված այլ խմբագրություններ: Դրանց շարքում ամենից հայտնին՝ Կեսարյան կամ Պամփյուլյան բնագիրն էր, որը կոչվում էր նաև Պաղեստինյան կամ Երուսաղեմյան. դա կարգավորվել ու կազմվել էր Պաղեստինյան Կեսարիայում Պամփյուլոս Բերյուտացու և Եվսեբիոս Կեսարացու ձեռքով և առաժվել՝ Պաղեստինում ու Փոքր Ասիայում: Այնուհետև հայտնի էր այսպես կոչված Անտիոքյան կամ Վուկիանյան բնագիրը, որ կազմվել էր Լուկիանոս Անտիոքացին և որը տարածված էր Անտիոքից մինչև Կ. Պոլիս. այս բնագիրն է, որ օգտագործել են Հովհան Ոսկեբերանը և Թեոդորետոս Անտիոքացի պատմագիրը: Հայտնի էր նաև Աղեքսանդրյան կոչված օրինակը, որ կազմվել էր Հեսիսիոս Եգիպտացի երեցն Աղեքսանդրիայում և տարածվել էր Եգիպտոսում ու շրջակա երկրներում:

Արդ՝ մեր առաջին թարգմանության սկզբնագրերի հարցին մի որոշ նպաստ բերում են զարձալ վրացական Աստվածաշնչի ուսումնասիրությունները: Ռ. Բլեյկի և բնիկների բնագրական հետազոտությունները պարզեցին, որ վրացերեն Մարկոսի Ավետարանը, որն անտարակուսելիորեն հայերենից է թարգմանվել, ներկայացնում է Կեսարյան բնագրի հատկանշեր, սակայն նրանք ենթադրում են, որ վրացականի մեջ պահված հայերեն այդ հին թարգմանությունը ավելի շուտ

⁴⁵ Նրանց մասին տե՛ս՝ „The Encyclopaedia Britannica“, 9th ed., vol. XXI. Edinburgh, 1886, p. 668-669. F. G. Kenyon, „Our Bible and the Ancient Manuscripts“, London, Eyre and Spottiswoode, 1965, p. 103-109. Լ. Գ. Զարեհանյան, «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնական», Վենետիկ, 1889, էջ 96—97:



ասորերեն լեզվով սկզբնագիր պիտի ունեցած լինի, քան հունարենը⁴⁶։

Ս. Լիոնեն վրացական և հայկական բնագրերի հարցում նոր ապացույցներով միանում է այս կարծիքին, այն տարբերությամբ, որ Կեսարյան բնագրի խնդրում որոշակիորեն հակում է հունարեն սկզբնագրի գաղափարին⁴⁷։ Իր այդ տեսակետը միաժամանակ տարածելով հայերեն Հին և Նոր Կտակարանների վրա առհասարակ⁴⁸։

Լ. Լրուարը ևս գտնում է, որ հնագույն շրջանում հայերենից թարգմանված վրացերեն Ավետարանները Կեսարյան խմբագրություն են ներկայացնում⁴⁹։

Ժ. Գարիտը նշել է, որ Գործք առաքելոցի հայերեն այն բնագիրը, որից թարգմանվել է վրացականը, ցույց է տալիս ասորական մի այնպիսի բնագիր, որը տարբերվում էր Պեշիտտոյից⁵⁰։ Խնդիրն այստեղ վերաբերում է, անշուշտ, ասորական նախասլեշիտոյան բնագրին, որն ընդհանրապես ուղղորդություն է գրավել նաև Ֆ. Կ. Կոնիքիի Վերջինս նկատել է, որ Նոր Կտակարանի հայերեն այժմյան բնագրի մեջ կան առաջին թարգմանությունից դեռ հայտնի կերպով մնացած շատ ընթերցվածներ, որոնք նախասլեշիտոյան բնագրի հետքեր են ցույց տալիս⁵¹։ Իհարկե՝ նախասլեշիտոյան համարվող այս բնագրերի ինքնությունը դեռ հաստատված չէ, ուստի և դժվար է կարծիք հայտնել այն առնչության մասին, որ նրանք կարող էին

ունենալ հունական վերոհիշյալ խմբագրությունների հետ։

Գալով երկրորդ թարգմանության սկզբնագրի հարցին՝ արդեն նշեցինք, որ մեր թարգմանիչների կողմից Կ. Պոլսից բերված վավերական օրինակները Բյուզանդական ժողովուրդում ընդունված պաշտոնական բնագրին էին։ Այժմ ավելացնենք, որ դա նույնիսկ Կեսարյան ընտիր բնագիրն էր, որից Կոստանդինոս Մեծի պատվերով, Եվսեբիոս Կեսարացին 50 օրինակ պատրաստելով Կ. Պոլիս էր ուղարկել 311 թ.։ Այս օրինակն է, որ անտարակույս, հիմք ծառայեց մեր երկրորդ թարգմանությանը⁵²։

Բնագրական նորագույն հետազոտությունների արդյունքն ի նպաստ է այս կարծիքին։ Հայտնի է, որ Մակեդոնի ուսումնասիրությունների ցույց տված ուղղությունը տանում էր դեպի Կեսարյան բնագիրը⁵³։ Մտրիսերր հակում էր ցույց տալիս դեպի այդ ուղղությունը⁵⁴ և Լիոնեն⁵⁵ ու Կոլուելը⁵⁶ հանդես էին գալիս ամրապնդող փաստերով։

Սակայն բանասիրական հետազոտությունները հիմնականում Կեսարյան բնագրին հանգեցնում են հանդերձ, ցույց են տալիս, որ մեր ընկալյալ բնագրում հունարեն ուղղորդողների հետքերը միատարր չեն։ Այս երևույթը կարելի է բացատրել նրանով, որ կա՛մ մեր թարգմանիչներն իրենց ձեռքի տակ միաժամանակ ունեցել են նաև տարբեր բնագրեր, կա՛մ էլ՝ թարգմանությունների վրա հետագայում ուղղումներ են կատարվել տարբեր բնագրերի հետևողությամբ։ Ավելի հավանական է այս վերջինը։

Դեռ 1715 թվականին Մ. Վ. Լակրոդը առ Կոստանդինոս Բենեդիկտոս Միքայել ուղղած իր նամակներից մեկում այն կարծիքն է հայտնում, որ Հին Կտակարանի հայերեն

⁴⁶ K. Lake, R. P. Blake and S. New, "The Caesarean Text of the Gospel of Mark", *The Harvard Theological Review*, 1928, No. 4, p. 207-404. R. P. Blake, "The Old Georgian Version of the Gospel of Mark", *Patrologia Orientalis*, vol. XX 1928, p. 439-574.

⁴⁷ St. Lyonnet, "Un important témoin du texte césarien de Saint Marc: La version arménienne", Beyrouth, 1935.

⁴⁸ St. Lyonnet, "Aux origines de l'Eglise Arménienne. La traduction de la Bib'e et le témoignage des historiens arméniens", *Recherches de Science Religieuse*, 1935, p. 170-187. Idem, "Les versions arménienne et géorgienne du Nouveau Testament", Paris, 1935.

⁴⁹ L. Le'oir, "La version géorgienne de la Bible", Թագմովկ, 1938, էջ 197-203.

⁵⁰ G. Garitte, "L'ancienne version géorgienne des Actes des Apôtres".

⁵¹ F. C. Conybeare, "The Growth of the Peshitta Version of the New Testament; illustrated, from the Old Armenian and Georgian Versions", *The American Journal of Theology*, vol. I, 1897, p. 883-912.

⁵² Ջոհրապյանի նախաբանը, տե՛ս՝ «Աստուածաշունչ մատենա» (միհատորյակ), Վենետիկ, 1805, էջ 4։ Զ. Գ. Զարհանյան, «Մատենադարան հայկական թարգմանութեան նախնեաց», էջ 97։ Ֆ. Կ. Կոնիքի, «Պամփիլիան օրինակ Սուրբ Կրոց», Թագմովկ, 1895, էջ 209-212, 260-263։

⁵³ F. Macler, "Le texte arménien de l'Evangile d'après Matthieu et Marc".

⁵⁴ Ըստ Լիոնեի. տե՛ս հաջորդը։

⁵⁵ St. Lyonnet, "La Version Arménienne des Evangiles et son modèle grec. L'Evangile selon Saint Matthieu", *Revue Biblique*, Janvier 1934, Տե՛ս նաև այս հեղինակի հիշատակված նախորդ աշխատությունները։

⁵⁶ E. C. Colwell, "The Caesarean Readings of Armenian Gospel Manuscripts", *Anglican Theological Review*, vol. XVI, 1934, p. 113-132.

թարգմանությունը Աղեքսանդրյան սկզբնագիր է ունեցել⁵¹։ Հետագայում այդ կարծիքը բաժանել են Կատուլեն⁵² և Էրմոնին⁵³։

2. Ս. Կոզյանը Մակարայիցվոց Բ գրքի բնագրական ուսումնասիրության արդյունքներով կարողացավ ցույց տալ, որ Աստվածաշնչի հայկական թարգմանության միջ թե՛ Աղեքսանդրյան, թե՛ Վեցիջյան և թե՛ Լուկիանյան բնագրերի հետքեր կան⁵⁴։

2. Ն. Ալիկյանը հաստատեց երեզնարացրեց այս եղբայրացությունը՝ հիմնվելով էջմիածնի Մատենադարանի № 193 (—այժմյան Երևանի Պետ. Մատ. № 193) ձեռագրի մի հիշատակարանի վրա, որը գրված է 1299 թվականին։ Այս ձեռագիրը բովանդակում է Սողոմոնի գրքերը և փոքր մարգարեները, որոնց վերջում հիշատակագրված է. «Ուղղեալ է դարինակս դայս յԱղեքսանդրացուց և յԵրուսաղեմացուց արինակէ. դարձեալ և ի Զորեք-կնտյն Ուլրիդենի։ Գրեցաւ երկուտասան մարգարէս ըստ Եւթանասնիցն և երկուց թարգմանացն»⁵⁵։

Այս հիշատակարանից երևում է, որ հայկական թարգմանությունները ճշտումների և ուղղումների էին ենթարկվել ոչ միայն Աղեքսանդրեան (Աղեքսանդրացուց) և Որոգի-նեսի Քառիջյան բնագրերի հիման վրա, այլև կրկին անգամ ստուգվել էին Կեսարյան (Երուսաղեմացուց) բնագրով, ժամանակի ընթացքում առաջացած այլալուծումների վերացման համար։

Այս նույն փաստը մենք գտնում ենք նաև Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի № 1 ձեռագրի Աստվածաշնչում, — գրված 1319 թվականին, — որը հիմնական օրինակ է ծառայել Հոհրայանի քննական հրատարակությունը⁵⁶։ այս գրագիրը Պողոսի թղթերի

վերջում ունի հետևյալ հիշատակագրությունը. «Ընդարինակեցաւ դիրքս այս ըստ Կեսարացուց արինակաց որ կան յարկեղս դրոց սրբոյն Պամփիլեայ իւրովը ձեռաւը դրեալ»։

Շատ սլարվ չէ՝ այս հիշատակագրությունն ամբողջ Աստվածաշնչին է վերաբերում, թե միայն Պողոսի թղթերին. թվում է՝ միայն Պողոսի թղթերին. սակայն երկու դեպքում էլ բացահայտվում է մի բան, այն, որ Կեսարյան բնագրի հիման վրա կատարված վերադարձությունն այն փաստը, որ նշեցիք վերևում, եթե միայն Հին Կտակարանին էր վերաբերում, ապա այս վերջին փաստը ընդգրկում է նաև նոր Կտակարանը։

Մեր հանելիք հետևությունն այն է, թե հայկական թարգմանությունները պարբերաբար ստուգումների են ենթարկվել։

Այս կապակցությամբ ասենք, որ Որոգի-նեսի Վեցիջյանի հետքերը՝ աստղանշերը և, երբեմն նաև, բրգաձևերը երևում են մեր հին գրագրերում. ինչպես նաև լուսանցներում ուղղ ընթերցվածներ՝ Ակյուղասի, Սիմաբոսի և Թեոդոտիոսի թարգմանություններից, որոնք Վեցիջյանից կամ Քառիջյանից են դալիս։ Այսպիսի ձևագրեր են՝ Երևանի Պետ. Մատենադարանի № 178 (1253—55 թթ.), № 4243 (1263 թ.), № 345 (1270 թ.), № 199 (1271 թ.), № 179 (1292 թ.), № 180 (1295 թ.), № 177 (ԺԳ դ.), № 353 (1317 թ.), № 206 (1318 թ.) և այլն։ Այսպիսի մի օրինակ է նաև Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի № 1 ձեռագիրը, որի մասին խոսեցինք վերելում։

Վեցիջյանից եկող պայմանական նշանների (աստղանշեր և բրգաձևեր) և լուսանցագրությունների հավաքումը, համադրումը և բաղադատական կարգով ուսումնասիրումն անտարակույս մեծ նպաստ կբերի հայկական Աստվածաշնչի բնագրական ուսումնասիրություններին։ Թե՛ ինչպես՝ իբրև օրինակ բերենք ԲԹագավորությանց Գ ղլխի 33 տունը, որ միևնույն նախագասությունը կրկնվել է երկու տարբերակով։

Միթե՛ որպես մեռանիցի անգղամ, մեռաւ Աբենենեւ. եթէ ըստ մահուանն նաբաղայ մեռաւ Աբենենեւ։

Մեկը մյուսից զանազանելու համար ընդգծեցինք առաջինը։

Ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ այստեղ միևնույն նախագասությունն տարբեր ծագում ունեցող երկու թարգմանությունների միակցում է տեղի ունեցել։

Հունական Յոթնասնից թարգմանությունը, որը աղբյուրն է հայկական թարգմանության, ունի միայն «Եթէ ըստ մահուանն նա-

⁵¹ Thesauri epistolici Lacroziati tomus III. Lipsiae, 1736, p. 201.

⁵² F. Kaulen, „Einleitung in die Heilige Schrift des Alten und Neuen Testamentes“, Frelburg, 1876.

⁵³ Վ. Էրմոնի, «Քննադատական ուսումնասիրություն Ս. Գրոց հայկական թարգմանության վրայ», Բազմավեպ, 1900, էջ 406—410.

⁵⁴ 2. Ս. Կոզյան, «Մակարայիցի Բ. գրքի հայերեն թարգմանությունը», Վիեննա, 1923. տե՛ս հատկապես էջ 53—61.

⁵⁵ 2. Ն. Ալիկյան, «Ս. Գրքի հայերեն թարգմանությունը», էջ 55.

⁵⁶ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս՝ 2. Գ. Զարեհա-նայան, «Մատենադարան հայկական թարգմանությանց նախնադար», Վենետիկ, 1889, էջ 129—141. 2. Բաբանյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ», հա. Ա. Վենետիկ, 1914, էջ 1—20.



բազայ մեծաւ Աբեններ» ընթերցվածը (Sept. I 618), և այդպէս է նաև մեր հնագույն ձեռագրերում. օրինակ՝ Երեւանի Պետ. Մատ. ձեռ. № 178 (էջ 165ա), № 345 (էջ 206բ) և № 177 (էջ 147բ), որոնցից առաջին երկուսը 1253—1270 թթ. ընթացքում են ընդօրինակվել, իսկ երրորդը՝ առհասարակ ԺԳ դարի ընդօրինակութիւնն է։ Այս նույն ձեռագրերում, որոնք Վեցիշյանից եկած լուսանցագրութիւններ ունեն, լուսանցներում զբտնում ենք «Միթէ որպէս մեռանիցի անցգամ, մեռաւ Աբեններ» ընթերցումը, որը Միմաքոսի հունարեն թարգմանութիւնից է, ինչպես ցույց է տալիս «Սիւմ» նշումը։

Սակայն տեսնում ենք, որ հետագա ժամանակի մի շարք ձեռագրերում Միմաքոսի այս ընթերցվածը լուսանցներից անցել է բնագրի մեջ՝ համատեղվելով նախկին ընթերցվածի հետ։ Այսպէս՝ երկու ընթերցվածներն արդեն համատեղված ենք գտնում Երեւանի Պետ. Մատենադարանի № 180 ձեռագրում (էջ 138բ), որը 1295 թվականից է, և № 353 ձեռագրում (էջ 152ա), որը 1317 թվականից է։ Այսպէս և՛ ուրիշ շատ ձեռագրերում. բավական է ասել, որ Աստվածաշնչի Զոհրայան հրատարակութեան համար օգտագործված 8 ձեռագրերն անխտիր բոլորն էլ նույն երկու տարբերակների համատեղված ընթերցումն են ներկայացնում⁶³։ Այս երկուսի հետ պիտի հիշել և այն, որ Երեւանի № 206 ձեռագրում Միմաքոսի ընթերցվածը լուսանցից անցել է բնագրի մեջ՝ փոխարինելով նախկին ընթերցվածին, իսկ վերջինս դուրս է բերվել լուսանցի վրա (էջ 131բ)։ Հավանաբար կորուսել են այսպիսի ուրիշ ձեռագրեր ևս։

Տարբերակների համատեղման և կամ փոխարինման վերոհիշյալ երկուսից Վեցիշյանի կամ Քառիշյանի ազդեցութեան փաստերից է։

Բայց նմանօրինակ փաստերը, լինեն դրանք ազդեցութիւններ Վեցիշյանից, թե մի այլ աղբյուրից, իրենց էութեան մեջ մնում են գրչական թյուրիմացութիւններ և բնագրական գուցե և անմեղ խախտումներ։ Մյուս կողմից ընդօրինակողների անուշադրութեան հետևանքով առաջ եկած պատահական աղավաղումներն, իրենց հերթին, ոչ միայն բնագրի լեզուն են աղծատում, այլև երբեմն նրա մտքերն են այլափոխում։ Եվ որ ավելին է՝ կան դեպքեր, երբ բնագիրը խախտման է ենթարկվում դիտումնավոր կերպով ու որոշ

նպատակներով։ Այդ մասին մենք կբերենք մի ակնառու օրինակ, որի վրա ժամանակին ուշադրութիւն է հրավիրել Հ. Գ. Զարբհանալյանը⁶⁴։

Խնդիրը վերաբերում է Ղուկասու Ավետարանի ԻԲ գլխի 43—44 տներին, որոնք, ինչպէս նկատել է Զարբհանալյանը, Ավետարանի որոշ ձեռագրերում վերացված են։

Այդ տներում պատմվում է, որ Հիսուսը Գեթսեմանի պարտեզում տագնապահար արյուն էր քրտնում ու աղոթում, և հրեշտակից քաջալերանք էր ընդունում։

Եւ երեւցաւ նմա հրեշտակ յերկնից և զօրացուցանէր զնա. և էր ի տագնապի, և մտադիւրութեամբ ևս կայր յաղօթս։ Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրեւ զկայլակս արեան ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր։

Արդ՝ է գարի վերջերին Թեոդորոս Քոթենավորի մի ճառից տեղեկանում ենք, որ Հայաստանում Մայրազոմեցի աղանդավորներն առարկելով, որ Քրիստոս «ոչ տկարութեամբ, այլ կարողութեամբ յաղթեաց մարտի թշնամւոյն», մերժում էին ընդունել վավերականութիւնը Ավետարանի հիշյալ երկու տների, որոնք «յաղօթականութեան զահաքստութիւնն պատմեն ամենակարողի Բանին Աստուծոյ»։ Իսկ Քոթենավորի աշակերտ Հովհան Օձնեցին հաջորդ դարի սկզբներին, հանդիմանական խոսք ուղղելով նույն աղանդավորներին, ասում էր.

«Եւ սակայն լիւր և շար լինելով՝ զանպարըշտութեանդ ոչ գիտացեր զյաղութիւն... Յորժամ տեսանես զմարդկային ինչ ուրուք ծառեալ զՔրիստոսի կրիցն, յանդգնիս աներկիւղաբար ի գրեցելոց անտի՝ որ զայնն քարոզէ, ի բաց ջնջել զբանն»։

Ուրեմն Մայրազոմեցիներն «աներկիւղաբար» հանդգնել էին «ի բաց ջնջել» Ավետարանի խոսքերը։

Ահա թե ինչո՞ւ են վերացված Ղուկասու Ավետարանի հիշյալ երկու տները որոշ ձեռագրերում։

Դ. ՎՈՒԼԳԱՏԱՅԻ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Առհասարակ տարածված կարծիք է, որ ԺԳ դարն այն շրջանն է, երբ հայկական թարգմանութեան բնադիրն սկսել է խաթարվել լատինական Վուլգատայի ազդեցության տակ, և այդ իրողութիւնը, եթե դա ճիշտ է, կապվում է հայկերիկյան Հեթում Բ թագավորի անվան հետ։

Նախ ասենք, որ գրականութեան մեջ հին Վուլգատա և նոր Վուլգատա անուններով

⁶³ Հմմտ. «Աստուածաշունչ մատեան» (հրատ. Հ. Հովհ. Զոհրայանի. միհատորյակ), Վենետիկ. 1805, էջ 194։

Սույն հրատարակութիւնն այսուհետեւ կնշենք «Զոհր.» ձևով։

⁶⁴ Հ. Գ. Զարբհանալյան. «Մասնականաբար...», էջ 208—211։

հայտնի են երկու բնագրեր. հինը, որ կոչվում էր նաև Խտալա (խտալական), հունարեն Յոթանասնից բնագրից էր թարգմանվել, բայց Դ գարում այդ թարգմանությունը հիմնովին սրբագրվել էր Հերոնիմոս Ստեփանոսացու կողմից, Հին Կտակարանի մասին հիմք ընդունելով եբրայական սկզբնագիրը: Այստեղ մեր խոսքը վերաբերում է նոր կամ Հերոնիմյան Վուլգատային, որը պաշտոնապես ընդունված բնագիրն է Հռոմեական Եկեղեցու կողմից:

Վուլգատայի ազդեցության առաջին նշանները Կիլիկյան Հայաստանում են երևան եկել ԺԳ դարում ընդօրինակված Աստվածաշնչերում՝ «Ֆռանկաց» (լատինական) գլխաբաժանումների մուծմամբ: Վուլգատայի գլխաբաժանումները համատեղվում էին հայկական բնագրի նախկին գլխաբաժանումների հետ: Այդ նորությունը, որ հետզհետե տարածվեց և, դիտական առումով որպես գրական երևույթ, վերջնականապես ընդունվեց մեզ մոտ, հանդես էր եկել 1295 թ. Հեթում Բ թագավորի համար գրված հայտնի Աստվածաշնչով, որն այժմ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում 180 համարի տակ և որ հիշատակեցինք վերևում: Այդ նորությունը դրական կողմն այն էր, որ դրանով անսահման հնարավորություն ստեղծվեց Աստվածաշնչի հայկական և օտար բնագրերի համեմատական ուսումնասիրության համար:

Սակայն մեր օրերում Հեթում Բ-ի կատարած գործի մասին բանասիրության մեջ տիրում է այն թյուրիմացությունը, թե նա, լատինական գլխաբաժանումներից բացի, հայկական թարգմանության բնագիրը սրբագրությունների ու խմբագրման է ենթարկել լատինական Վուլգատայի հիման վրա: Այսպիսի կարծիք են ունեցել անցյալում Լակրոզը, Վիստոն եղբայրները, Բրենգենկամպը և էյխորներ, որոնց միացել է Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանը⁶⁵, և մեր ժամանակներում՝ Մակլերը⁶⁶, Այս հարցը հետաքրքրում էր նաև մեզ՝ մեր հետազոտությունների ընթացքում:

Նախորդ տողերում Միմաքոսի խնդրո առարկա եղած լուսանցային ընթերցվածի տեղափոխումը բնագրի մեջ՝ մեզ մտածել էր տալիս, թե դա հավանաբար պատահական երևույթ չէր և թե այսպես կամ այնպես կարող էր կապ ունենալ Վուլգատայի ընթերցման հետ, որովհետև Միմաքոսի եբրայական ընթերցվածը համապատասխանում է Վուլգատային, քանի որ վերջինս էլ եբրայական

բնագրից է թարգմանվել, իսկ այն հանգամանքը, թե այդ ներմուծումը հայկական բնագրի մեջ՝ առաջին անգամ մեզ հայտնի է Երեմիայի № 180 ձեռագրով, որը, ինչպես նշեցինք, Հեթում Բ-ի Աստվածաշունչն է, գրված 1295 թ., կարող էր մտածել տալ, թե այս ներմուծումը Հեթում Բ-ին վերադրված փոփոխություններից մեկն է: Բայց այստեղ տակավին հարց է առաջանում, թե արդյոք չկա՞ն և մի օր չե՞ն հայտնվի նույն ներմուծումն ունեցող ուրիշ ձեռագրեր, որոնք 1295 թվականից առաջ գրված լինեն: Մյուս կողմից՝ Հեթում Բ-ի բնագրի մեջ նկատվող այդ փաստը դեռ բնագրական իրական փոփոխություն չէ, որովհետև, ինչպես տեսանք, Միմաքոսի ընթերցվածն այնտեղ ներմուծված է հին ընթերցվածի հետ համատեղված կարգով և ոչ իդիստրիկման: Այնպես որ՝ մեր կարծիքով դժվար է այս միակ և այն էլ սրբագրական հանգամանք չկրող օրինակի վրա հենվելով տուրք տալ այն մեղադրական կարծիքին, թե Հեթում Բ-ը խաթարել է հայկական բնագիրը: Բայց մեկ համար հարցը սրանով չի փակվում, որովհետև Հեթում Բ-ի հասցեին եղած մեղադրանքները լուրջ երևույթ են կրում և պետք է հանգամանորեն պարզվեն:

Ի՞նչ է ասվում:

Մենք ձեռքի տակ չունենք ոչ Բրենդենկամպի և ոչ էյխորների դրածները, որոնք Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանի կողմից են հիշատակվում, բայց չենք կասկածում, որ նրանց աղբյուրները կլինեն: Լակրոզն ու Վիստոն եղբայրները, քանի որ իրենք հայագետներ չեն, իսկ Վիստոն եղբայրների կարծիքն այս հարցում բավականին զուսպ է և հազիվ թե կարելի լինի նրանց պատկերացնել մեղադրողի դերում⁶⁷: Իսկական մեղադրողը Լակրոզն էր: Լակրոզը թյուրիմացությունների մեջ է եղել այս հարցում: Նա է, որ հրապարակ է հանել այն կարծիքը, թե 1666—68 թթ. Ամստերդամում Ոսկան Երևանցու հրատարակած Աստվածաշնչի նախագաղափար օրինակը Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչն է եղել և այդ կարծիքը մինչև այսօր հրատարակ է բանասիրական գրականության մեջ: Իսկ ի՞նչ հիման վրա էր Լակրոզը կազմել այդ կարծիքը:

Դա երևում է նրա երկու նամակներից, որոնցից առաջինը 1733 թ. ուղղված է Անաոնիոս Աթորգոսին⁶⁸, իսկ երկրորդը՝ Ալբերտոս Բենդելիոսին, գրված մոտավորապես 1734 թ.⁶⁹: Նա ասում էր, որ Փարիզի Արքա-



⁶⁵ Sht.՝ М. Тер-Мовсисян, «Ист. пер. Библии на арм. яз.», стр. 59—60. Վկայակոչում է նախորդ գիտնականներին:

⁶⁶ F. Macler, «Le texte arménien de l'Evangile d'après Matthieu et Marc», p. 24—25.

⁶⁷ Sht.՝ «Mosis Chorenensis Historiae Armenicae libri III», Londoni, 1736. p. XI.

⁶⁸ «Thesauri epistolici Lacroziani tomus III», p. 4.

⁶⁹ Ibidem, p. 69.

յական Մատենադարանում Հեթում թագավորի ձեռագիր Աստվածաշնչից գտնվում են սլավոնական հատվածները (iragmenta authentica), որոնց մասին նա տեղեկություն էր ստացել Զ. Զ. Սրբողորհից: Թե ի՞նչ էին ներկայացնում այդ հատվածները՝ երևում է Լակրոզի հաղորդած հետևյալ տեղեկություններից:

1. Հեթում թագավորի Աստվածաշունչը գրված է Քրիստոսի 1295 թվականին և հայոց 744 թվականին: Թվականը նշված է Հեթումի «նախաբանում» (praefatio):

2. Պարունակում է Հեթումի «ոտանավոր նախաբանը» (praelatio metrica, իմա՝ «Ոտանավոր բարեպաշտի թագաւորին Հայոց Հեթմոյ»):

3. Պարունակում է Հերոնիմոսի բոլոր նախադրություններն ու առաջարանը (Praefationes et Prologus galeatus), որ լատիներենից հայերենի է թարգմանել Հեթումը, անշուշտ Լակրոզի կարծիքով:

Հայտնի չէ, թե Լակրոզն ի՞նչ էր հասկանում վավերական հատվածները ասելով: Հեթում Բ-ի Աստվածաշնչից (բնագրից) իսկական մասն՝ որոնք ընկել էին Փարիզ, թե նրանից հավատարմորեն արտագրված մասեր⁷⁰: Բոլոր դեպքերում՝ նա հավատացած էր, որ դրանք Հեթում թագավորի Աստվածաշնչի մասերն են:

Լակրոզին հետաքրքրողը հայկական բնագրի հարազատության հարցն էր:

Փարիզյան սլավոնական հատվածները-ի հետ համեմատության դնելով Ոսկանյան Աստվածաշնչի բնագիրը, որի մեջ խիստ զգալի են Վուլգատայի հիման վրա կատարված բնագրական խախտումները, նա գտնում էր, որ այդ եղծումների հեղինակը ոչ թե Ոսկան Երեանցին է, այլ Հեթում թագավորը: Նրա կարծիքով՝ Հեթումը հայկական բնագիրը Վուլգատային հարմարեցնելու համար այնքան ջանասեր ու մանրակրկիտ աշխատանք էր կատարել, որ նույնիսկ Հերոնիմոսի հարակից գործերն էլ էր Վուլգատայից թարգմանել: Հեթմյան այս բնագիրն, ըստ Լակրոզի, այնուհետև տիպական էր դարձել Աստվածաշունչի ընդօրինակությունների համար և Ոսկանի հրատարակությունն էլ ուրիշ բան չէր, եթե ոչ լուր նրա վերարտադրությունը: Այստեղից էլ այն եզրակացությունը, թե հայկական անեղծ բնագիրը գտնելու համար հարկ է Հայաստանում որոնել այնպիսի ձեռագրեր, որոնք ընդօրինակված լինեն նախահեթմյան շրջանում:

⁷⁰ Զարմանալի է, որ այս ձեռագրի հետքերը չեն երևում Փարիզի հայերեն ձեռագրերի ղույցակում, որ հրատարակել է Ֆ. Մակկերը:

Այս եզրակացությունը, գիտնականների համար այնքան ուշագրավ, բնականաբար իր ուժը պիտի պահեր մինչև մեր օրերը, այնպես որ Ֆ. Մակկերը ևս, 1919 թ., հաշվի նստելով դրա հետ, գտնում էր. որ «Հայկական Ավետարանի բնագրի վերաբերյալ հետադոտությունների համար պետք է ամեն դեպքում ընտրել նախակիրիկյան շրջանի ձեռագրեր»:

Բայց այս եզրակացությունը հիմնված էր ավադի վրա: Բյուրիմացությունն այնտեղ էր, որ «սլավոնական հատվածներ»-ը Հեթում թագավորի աշխատանքն էին համարվում: Մենք, որ այսօր ձեռքի տակ ունենք Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը, ի վիճակի ենք ստույգ խոսք ասելու այդ մասին:

Հեթմյան ձեռագիրն իրոք գրված է Քրիստոսի 1295 և Հայոց 744 թվականին, բայց այդ թվականը նշված է ձեռագրի ոչ թե նախաբանում, որպիսին գոյություն չունի, այլ վերջում գտնվող նրա հիշատակարանում: Աեռագիրն իրոք պարունակում է Հեթում թագավորի ոտանավորը, բայց այդ ոտանավորը գտնվում է ոչ թե նրա նախաբանում կամ նախաբանից հետո, այլ վերջում գտնվող հիշատակարանից հետո: և վերջապես ձեռագրում ոչ մի հետք չկա Հերոնիմոսի նախադրություններից ու առաջաբանից, որոնք, Լակրոզի կարծիքով, պիտի թարգմանված լինեին Հեթում թագավորի կողմից:

Հաշվի առնելով այս հիմնական տարբերությունները և Լակրոզի այն հավաստումը, թե Ոսկան Երեանցու օգտագործածը փարիզյան սլավոնական հատվածները-ն են, մենք դալիս ենք այն համոզման, որ այդ հատվածներն ուրիշ բան չէին, եթե ոչ Ոսկանի կողմից պատրաստված նյութեր, ի մի բերված զանազան աղբյուրներից և ամփոփված երեք տետրակների մեջ. այսպես՝

1. Հեթում Բ-ի Աստվածաշնչի հիշատակարանը (հանված Երեանի № 180 ձեռագրից): Լակրոզը կարծում էր, թե սա Հեթումի նախաբանն է, որովհետև այս տետրակը ամենից առաջ էր գետեղված:

2. Հեթում Բ-ի ոտանավորը (հանված նույն № 180 ձեռագրից): Լակրոզը կարծում էր, որ սա Հեթումի ոտանավոր նախաբանն է, որովհետև այս տետրակը նախորդից հետո էր դետեղված:

3. Հերոնիմոսի նախադրություններն ու առաջարանը՝ թարգմանված նույնիսկ Ոսկանի կողմից (հանված լատիներեն Վուլգատայից): Լակրոզը կարծում էր, որ այս թարգմանությունը ևս Հեթումից էր, որովհետև այս տետ-

⁷¹ F. Macler, «Le texte arménien de l'Evangile d'après Matthieu et Marc», p. 24-25.

յալը Հեթումի նախորդ երկու հատվածներից հետո էր ղեկավարված:

Հայտնի է, որ Ոսկանն իր հրատարակության մեջ մոռնել է միայն վերջին երկու հատվածները (տետրակները):

Կարելի է հաստատորեն ասել, որ Հակրողը ձեռքի տակ չի ունեցել Հեթումի Աստվածաշնչի որևէ ընդօրինակություն, որպեսզի նրա վրա հիմներ իր կարծիքը: Նա կաթողիկոս թղթերից մեկի հետ կապված բնագրական մի հատված բնակելու համար դիմելով Ոսկանի հրատարակությանը և նրա բնագիրը նույն համարելով Հեթումի բնագրի հետ, ափսոսանք է հայտնում, որ Հեթումի ժամանակաշրջանից ավելի հին ձեռագրեր հայտնի չեն՝ խնդրել պարզելու համար: Ուրեմն՝ եթե նա Հեթումի բնագիրը ձեռքի տակ ունեցած լիներ, նրանով էլ տեղի ունեցող պարզած կլինեին իրեն հուզող հարցը, տեսնելով, որ Ոսկանին և Հեթումինը տարբեր բնագրեր են և թե Հեթումինը հայկական հենց այն հին ու անեղծ բնագիրն է, որ իր՝ Հակրողի կարծիքով պետք էր որոնել նախահեթմյան ժամանակաշրջանի ձեռագրերում: Պարզենք մեր ասածը:

Առ Անտոնիոս Աբորդոս ուղղած նամակում Հակրողը զբաղվում էր Հովհաննու Ա թղթի մի հատվածով, որը բանասիրության մեջ հայտնի է «Comma Johannaenum» անունով⁷²: Այդ հատվածը, որ, ըստ լատինական բնագրի, թղթի Ե գլխի 7 տունն է (6 և 8 տների հարակից մասերով), Վուլգատայից է առաջացել⁷³ և է հետևյալը՝ ըստ Ոսկանյան լատինականացած բնագրի.

6. ...եթ է Քրիստոս է ճշմարտութիւն.

7. Զի երեւ են, որք վկայեն յերկինս՝ հայր, բանն և ճոգին սուրբ. և երեւինս մի են.

⁷² Տե՛ս Aug. Bludau, „Das Comma Johannaenum in den orientalischen Übersetzungen und Bibe!-drucken“, Oriens Christianus, III, Roma, 1903. Հայերեն ամփոփումը՝ Հանդիս Ամստերդամ, 1904, էջ 62, 2. Գ. Գալեմյարյան, «Թուղթ Յովհ. Ա. Կաթողիկոսյց, գլուխ Ե. համար 7—8՝ առ հայս», անդ, 1906, էջ 225—234, 2. Պ. Ֆեհարյան, «Թուղթ Յովհաննու Ա. գլ. Ե, § 6—8», անդ, 1908, էջ 63—64: Այս հարցով զբաղվել են նաև Հակրողին ժամանակակից Վիստոն եղբայրները, տե՛ս՝ „Mosis Chorenensis Historiae Armeniacae libri III“, p. XVIII—XIX.

⁷³ „Biblia Sacra Vulgatae editionis juxta exemplaria ex Typographia Apostolica Vaticana Romae 1592 et 1593“, t. IV, Ratisbonae, 1802, p. 425. Այսուհետև այս հրատարակությունը կնշենք „Vulg.“ անով:

8. Եւ երեւ են, որք վկայեն յերկին՝ հոգի, ջուր, և արիւն. և երեւինս մի են⁷⁴:

Այս բնագիրն էր հայտնի՝ Ոսկանի օրերից: Հետագայում Աստվածաշնչի Զոհրապյան բնական հրատարակությանը հայտնի գարձավ, որ հայկական բնագրին հարադատ բնթերցումը տարբեր էր, այսինքն՝

6. ...զի ճոգին իսկ է ճշմարտութիւն.

7. Սոքա երեւին են որ վկայեն.

8. Հոգին, և ջուրն, և արիւնն. և երեւին մի են (Զոհր. 761)⁷⁵:

Այսպես է նաև հունարեն բնագրում⁷⁶, որի հարադատ արտահայտիչն է հայկականը: Ի դեպ՝ այսպես ունեն նաև Երևանի Պետ. մատենադարանի հետևյալ ձեռագիր Աստվածաշնչերը, որոնք 1262—1292 թթ. շրջանից են. № 4243 (էջ 53ր), № 345 (էջ 745ր) և № 179 (էջ 477ա):

Հակրողը ճիշտ էր կոհում, որ հայկական Սահակ-Մեսրոպյան բնագիրը պիտի չունենար Վուլգատային հատուկ առանձնահատկությունը. և որովհետև համոզված էր, որ այդ հավելումն առաջին անգամ Հեթումի օրինակում էր կատարվել, ապա նրա համար մեծ անակնկալ կլինեին, եթե հանկարծ պարզվեր, որ Հեթումի Աստվածաշնչը, տարբերվելով Ոսկանյանից, տալիս էր հայկական հին բնթերցումը: Եվ ահա՝ այդպես էլ մենք Երևանի № 180 ձեռագրում գտնում ենք այն. «Զի հոգին իսկ է ճշմարտութիւն. սոքա երեւին են որ վկայեն՝ հոգին, և ջուրն, և արիւնն. և երեւին մի են» (էջ 516բ)⁷⁷:

Այս փաստը նախ ցույց է տալիս, որ Հեթումի բնագիրը Հակրողի ձեռքի տակ չի եղել,

⁷⁴ Տե՛ս՝ «Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց եւր պարունակող» (հրատ. Ոսկան Երևանցու), Ամստերդամ, 1666, մասն Բ, էջ 693:

Այսուհետև այս հրատարակությունը կնշենք «Ոսկ.» անով:

⁷⁵ Տեսությունը մենք ենք փոխել. տե՛ս Վաչորդ ծանոթագրությունը:

⁷⁶ Հմտ. „Novum Testamentum graece; recensiois Tischendorfianae ultimae textum cum Tregellesiana et Westcottio-Hortiano conlulit et brevi adnotatione critica additisque locis parallelis illustravit Oscar de Gribhard“, ed. stereotypa octava, Lipsiae, 1901, p. 292—293.

Այսուհետև այս հրատարակությունը կնշենք „NTG.“ անով:

Ըստ հունարեն բնագրի հրատարակության՝ Զոհրապյանի կատարած տեսությունը սրբադրության էր կարտունում:

⁷⁷ Նույն ընթերցումն ունի նաև Հեթում Բ-ի ծառայը, որված 1286 թ., տե՛ս՝ Երևանի Պետ. մատենադարանի ձև. № 979 (էջ 282բ):



երկրորդ՝ ապացուցում է, որ Հեթումի ձեռագրում հայկական թարգմանության բնագիրը անաղարտ էր, հակառակ կարծիքին:

Հեթումի բնագրի անաղարտության մասին բերենք ուրիշ օրինակներ ևս:

Առ Կորնթացիս Ա թղթի ԺԲ գլխի 29 տան մեջ հայկական բնագիրն ունի մի նախադասություն:

Միթէ ամենեքին զօրութիւնք իցեն (Ձոհր. 783):

Այս նախադասությունը նույնպես գալիս է հունարեն բնագրից (NTG 336). Լատիներեն Վուլգատան այս նախադասությունը չունի. չունի նաև Ոսկանի հրատարակությունը, բայց Հեթումի օրինակը հարադատորեն պահել է այդ մասը (ձեռ. № 180, էջ 532ա):

Ղևտական գրքի Գ. 16 ըստ հին թարգմանության կարդում ենք Ձոհրապյան հրատարակության մեջ:

Եւ հանցէ քահանայն ի սեղանն պտուղ ի հոտ անուշից տեսոն. զամենայն հարստեստոն (Ձոհր. 65):

Ձոհրապյանի օգտագործած 8 ձեռագրերը բոլորն էլ այսպես ունեն: Նույն բնթերցվածն ունի նաև Հեթումի օրինակը (ձեռ. № 180, էջ 51ա): Թարգմանությունը լիովին համապատասխանում է հունարեն Յոթանասնից բնագրին, (Sept. I 191): Բայց Վուլգատան երրայական բնագրից այլ կերպ է թարգմանել այս տունը (Vulg. I. 163) և դրա աղբյուրությունը էլ Ոսկանի փոփոխել ու խմբագրել է այն:

Եւ հանցէ քահանայն ի սեղանն պտուղ ի հոտ անուշից տեսոն. ամենայն հարստեստոն եղիցի (Ոսկ. Ա 104):

Ճիշտ է, որ հունարեն բնագիրը կարող էր նաև այսպես հասկացվել. բայց Ոսկանը հունարեն չգիտեր, ուստի և նա այստեղ ևս Վուլգատային է հետևել:

Առակաց գրքի Լ. 30 տունը Սահակ—Մեսրոպյան թարգմանության մեջ ունի՝

Եւ ոչ թիկունս դարձուցանէ յանասնոց (Ձոհր. 448):

Ձոհրապյանի հրատարակության համար օգտագործված 8 ձեռագրերը բոլորն էլ այսպես ունեն՝ համապատասխանելով հունարեն Յոթանասնից բնագրին (Sept. II 466): Այս հարազատ ընթերցումն ունի նաև Հեթում Բ-ի օրինակը (ձեռ. № 180, էջ 329բ): Իսկ Ոսկանի հրատարակությունը շեղվում է:

Եւ ոչ զթիկունս դարձուցանէ ի թշնամոյ (Ոսկ. Բ 112):

Այս սրբագրությունը թեև Վուլգատայից բառացի թարգմանվելու արդյունք չէ, բայց նրա աղբյուրությունը է կատարված (հմտ. Vulg. II 422):

Բերենք մի օրինակ ևս, որը շատ ուշագրավ է:

Առ Հոռմայեցիս Ը. 38 տան մեջ, ըստ Ձոհրապյանի հրատարակության, Սահակ—Մեսրոպյան թարգմանությունն ունի:

Ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշտակ, և ոչ իշխանութիւնք, և ոչ որ կանս, և ոչ հանդերձեալքն և ոչ զօրութիւնք (Ձոհր. 772):

Այսպես ունեն Ձոհրապյանի բոլոր ձեռագրերն էլ. և դա լիովին համապատասխանում է հունարեն բնագրին՝ «ὅτε θάνατος οὐτε ζωή, οὐτε ἄγγελος οὐτε ἀρχαί, οὐτε ἐνεστέωτα οὐτε ἀξιωματά, οὐτε δυνάμεις» (NTG 309). Իհարկե՝ այսպես ունի նաև Հեթում Բ-ի օրինակը (ձեռ. № 180, էջ 526բ): Սակայն Ոսկանի հրատարակության մեջ այս մասը խմբադրված է:

Ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշտակ, և ոչ իշխանութիւնք, և ոչ զօրութիւնք, և ոչ որ կանս, և ոչ հանդերձեալքն, և ոչ կարողութիւն (Ոսկ. Բ 612):

Այս փոփոխությունն ուղղակի հիմնված է Վուլգատայի վրա, որ է՝ «Neque mors, neque vita, neque angeli, neque principatus, neque virtutes, neque instantia, neque futura, neque fortitudo» (Vulg. III 283—4).

Թե ի՞նչ ձևով է տեղի ունեցել խմբագրումը՝ ցույց կտա հետևյալ համադրական պատկերը:

Դասական բնագիր
(ըստ Յոթանասնից)

Ոսկանի բնագիր
(ըստ Վուլգատայի)

- | | | |
|------------------------------------|-----|---|
| 1. Ոչ մահ (ὅτε θάνατος) | ... | = Ոչ մահ (neque mors) |
| 2. և ոչ կեանք (ὅτε ζωή) | ... | = և ոչ կեանք (neque vita) |
| 3. և ոչ հրեշտակ (ὅτε ἄγγελος) | ... | = և ոչ հրեշտակ (neque angeli) |
| 4. և ոչ իշխանութիւնք (ὅτε ἀρχαί) | ... | = և ոչ իշխանութիւնք (neque principatus) |
| 5. և ոչ զօրութիւնք (ὅτε ἐνεστέωτα) | ... | = և ոչ զօրութիւնք (neque virtutes) |
| 6. և ոչ որ կանս (ὅτε ἐνεστέωτα) | ... | = և ոչ որ կանս (neque instantia) |

7. և ոչ հաճեցեալքն (οὐτε μελλόντων) . . . = և ոչ հաճեցեալքն (neque futura)
 8. և ոչ գորութիւնք (οὐτε δουλείαι) . . . = . . .
 9. . . . = և ոչ կառողութիւն (neque fortitudo)

Ուշագրավ է նաև Բարուք Ա. 17 տան խնդիրը, որը դարձյալ Վուլգատայի առանձնահատկություններից է։ Այս տունը, որ բերականորեն կապված է նախորդ տան հետ, հունարենում ունի. «ὡς ἡμεῖς οὐκ ἐν τῷ Κυρίῳ» (Sept. III 352), այսինքն մեր թարգմանությամբ՝ «մեզաք առաջի տեառն», իսկ հայերեն դասական թարգմանությունն ունի միայն՝ «առաջի տեառն», առանց «մեզաք» բառի։ Այսպես է Ջոհրայայանի բոլոր ձեռագիր օրինակներում (Ջոհր. 592)⁷⁸ և այսպես է նաև Հեթում Բ-ի օրինակում (ձեռ. № 180, էջ 429)։ Բայց Վուլգատան այստեղ ունի մի ամբողջ նախադասություն՝ «Peccavimus ante Dominum Deum nostrum et non credidimus, dissidentes in eum» (Vulg. III 196), և ըստ այնմ էլ Ոսկանը թարգմանել ու մոծել է հայկական բնագրի մեջ։

Մեղաք առաջի տեառն սստոծոյ մերոյ և ոչ հաւատացաք սպստամբեալք ի նմանէ (Ոսկ. Բ 306)։

Այս օրինակները, որոնց շարքը կարելի էր դեռ երկարել, ցույց են տալիս, որ Հեթում Բ-ի ձեռագիրը լատինական Վուլգատայի հիման վրա մոծված աղավաղումներից զերծ է և նախադասափար չի հանդիսացել Ոսկանյան հրատարակության համար։

Մի քանի այլ օրինակներով կարելի է նաև տեսնել, որ Հեթում Բ-ի Աստվածաշունչը Ծ դարի մեր թարգմանության հարադատ օրինակներից է առհասարակ։

Սաղմոսների ԿԳ. 7 տունը մեր ձեռագրերից շատերում աղավաղված է, ինչպես կարելի է տեսնել Ջոհրայայանի հրատարակության մեջ։

Պատրաստեցան ի քննել զքննութիւն (Ջոհր. 409)։

Ջոհրայայանի օգտագործած բոլոր ձեռագրերն էլ այս ընթերցումն ունեն՝ առանց բացառության։ Այսպես է նաև, բնականաբար, Ոսկանի հրատարակության մեջ (Ոսկ. Բ 53)։ Իսկ Հեթում Բ-ի օրինակը, մեր հնագույն և ընտրելագույն ձեռագրերի հետ միասին, տա-

լիս է այլ ընթերցում (ձեռ. № 180, էջ 299բ)։ Պատրաստեցան ի քննել զքննութիւն։

Այսպես ունեն նաև Երևանի ձեռագրեր № 345 (էջ 418բ)՝ 1270 թվականից, № 177 (էջ 307բ)՝ 1292 թվականից, № 179 (էջ 268ա)՝ նույն թվականից, № 206 (էջ 269բ)՝ 1318 թվականից և այլն։ Եվ այս ընթերցումն է, որ ճիշտ է՝ համապատասխան հունարեն Յոթանասից բնագրին (Sept. II 292)։

Սաղմոս ԾԺԳ. 9—10 տներում դասական թարգմանությունն ունի։

Տուն Իսրայէլի յուսացաւ ի տէր, օգնական ընդունելի է նոցա. տուն Ահարոնի յուսացաւ ի տէր. օգնական ընկերելի է նոցա (Ջոհր. 424)։

Այսպես ունեն Ջոհրայայանի օգտագործած բոլոր ձեռագրերը։ Այսպես ունի նաև Հեթում Բ-ի օրինակը (էջ 312ա)։ Բայց Ոսկան Երեւանցին սրբագրել է՝ «...օգնական և ընդունալ է նոցա... օգնական և ընկերոջ է նոցա» (Ոսկ. Բ 78)։

Այս ձևով նաև՝

Երեմ. ԺԵ. 10. Հեթումն ունի՝ «ղաւուրթիւն իմ պակասեաց յանիծանելեաց իմոց» (էջ 413բ). Ոսկանի մոտ՝ «գորութիւն իմ պակասեցաւ յանիծողաց իմոց» (Բ մասի էջ 256—7)։

Դ Թագ. ԺԳ. 14. Հեթումն ունի՝ «այլ զի գործաւնաց գործոյն» (էջ 170ա). Ոսկանի մոտ՝ «այլ զի դործունեաց գործոյն» (Ա մասի էջ 385)։

Դ Թագ. ԺԶ. 2. Հեթումն ունի՝ «ամաց քանից էր Ահաբ» (էջ 171բ). Ոսկանի մոտ՝ «ամաց քաննհնգից էր Ահաբ» (Ա մասի էջ 389)։

Ա Հռոմ. Զ. 19. Հեթումն ունի՝ «որպէս պատրաստեցէք զանգամս ձեր ծառայս պրղծութեան» (էջ 525բ). Ոսկանի մոտ՝ «որպէս պատրաստեցիք զանձինս ձեր ծառայս պրղծութեան» (Բ մասի էջ 609)։

Մատթ. ԻԳ. 32. Հեթումն ունի՝ «և դուք լցէք զչափ հարց ձերոց» (էջ 462ա). Ոսկանի մոտ՝ «և դուք լցիք զչափ հարցն ձերոց» (Բ մասի էջ 461)։

Հեթում Բ-ի օրինակում հատուկ անուններն ամենուրեք պահել են դասական տառադարձության ձևերը՝ Յովսիա, Յովհաննէս, Յովսէփ, Մովսէս, Ահարոն, Յակովբ, Սեզովր. և դա առանձնապես աչքի է ընկնում, երբ համեմատում ենք Ոսկանի հրատարակության հետ. Յօսիա, Յօհաննէս, Յօսէփ, Մօսէս, Ահարոն, Յակօր, Սեզօր։

⁷⁸ Ջոհրայայանի մոտ առաջի տեառն բառերը հաշվվել են 16 տան մեջ, որի հետևանքով 17 տունը բացակայում է, այնինչ ըստ հունարենի՝ այդ երկու բառերը կազմում են 17 տունը։



Այս բոլորից հետո պարզ է, որ թյուրիմացություն է այն կարծիքը, թե Հեթում Բ-ի ձեռագիր օրինակը Ոսկան Երևանցու հրատարակած բնագիրն էր և հանդիսանում էր Վուլգատայի հիման վրա սրբագրությունների ենթարկված բնագիր:

Ե. ՎՈՒԼԳԱՏԱՅԻ ԻՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ԽԱԹԱՐԱՐԱՆ
ՇՐՋԱՆԸ

Պետք է զգուշանալ Աստվածաշունչ մատյանի խաթարված օրինակներից: Խաթարում պետք է համարել բնագրի գիտակցաբար կատարված սրբագրությունները՝ օտար և անհարազատ բնագրերի հիման վրա: Հայկական բնագրի այդպիսի խաթարման փորձեր կատարվել են՝ հիմք ունենալով լատինական Վուլգատա-ն:

Հնկայալ բնագիր (Ձոհ. 131)

- | | |
|--|------------------------------------|
| 24. Մտշեալ սովով և կերակրով քաշնոց . . . | = Խծեալ [և] զազանաբեկ զգէշ աւելեալ |
| 24. Քարշել զնոսա ընդ երկիր | = Այս և անդ քարշեցեն |
| 32. Յոբոյ Սողոմայ է որք նոցա | = յՅայգոյն Սողոմայ էր տունկի |
| 33. Առանց բշլուրեան | = Անհնարին |
| 35. Սլալեսցի (տուն նոցա) | = Հարցի գհարի |
| 38. Ձնարալ զոնից նոցա | = Ձնարալ սպանդիցն |

Ձեռագիր № 2267

Դժբախտաբար այս քաղվածքներն ամբողջական նախադասություններ չեն ներկայացնում, այլ միայն առանձին բառեր՝ հայերեն—կոմաներեն հավասարումներով⁹⁰, ուստի և բնագիրը հանգամանորեն ուսումնասիրելու հնարավորություն չեն տալիս: Սակայն կարծում ենք, որ Լեհաստանի պալմաններում կատարված այս սրբագրությունների ծագումը պետք է որոնել Վուլգատայում: Լեհաստանի սահմաններում ընդօրինակված ձեռագիր Աստվածաշնչի շարքում անշուշտ կը գտնվեն այնպիսիներ, որոնք կհամապատասխանեն լուսիկ սարկավագի օգտագործած օրինակին:

Հայկական բնագրի խաթարման փորձերը, սակայն, հիմնականում ժէ դարում են կատարվել: Ղազար Բաբրդացին հայկական Աստվածաշնչի նախկին գլխաբաժանումներին առնթեր լատինականները զետեղելով հանդերձ, ինչպես էր Հեթում Բ-ի օրինակում, որպես նորություն՝ ավելացել էր նաև լատինական գլուխների տնահամարները. բացի այդ՝ նա վերջում զետեղել էր նաև Աստվածաշնչի նյութերի երկու այբբենական ցանկեր, մեկը՝ ըստ հին գլխաբաժանումների, մյուսը՝ ըստ լատինական գլխաբաժանումների և տնահամարների: Ղազար Բաբրդացին

Վուլգատայի ազդեցության տեսակետից ուշադրության արժանի է նախ մի փաստ, որը վերաբերում է ԺՁ դարին և լեհահայ միջավայրին: Երևանի Պետ. Մատենադարանի № 2267 ձեռագրում Սաղմոսարանից և Բ 0րինաց գրքից բերված են մի շարք քաղվածքներ (էջ 43ա—52բ), որոնք լուսիկ սարկավագի ձեռքով են գրված կվովում՝ 1581 թվականին: Այդ քաղվածքները ներկայացնում են որոշ սրբագրությունների ենթարկված մի բնագիր, որի հետքերն ամենևին չեն երևում Ձոհրապյանի քննակնի հերատարակության տարր-թերջվածքներում:

Ուշադրության արժանի են հատկապես Բ 0րինաց գրքի ԺԲ գլխին պատկանող որոշ մասեր, որոնք գտնվում են ձեռագրի 47ա—47բ էջերում: Դրանցից են հետևյալ օրինակները.

այս ձևով կարգավորած իր Աստվածաշունչը 1619 թ. կվովում ընդօրինակել է տվել Միթ-էոյի որդի Թորոս գրչին⁹⁰: Նրա կատարած աշխատանքի այս հանգամանքները նկատի առնելով՝ Ձոհրապյանը մտածում էր, որ

⁹⁰ Այդ Աստվածաշունչն այժմ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում, ձեռ. № 351: Հիանալիորեն նկարագրված է: Հիշատակարանում՝ «Շնորհիւ... աւարտեալ եղև Աստուածաշունչ մատենս ի յերկիրս Ռուդաց, ի մայրաքաղաքս Իլով, ի դուռն Հաճկատար Աստուածածին վանուցս... ի ամս. կենարարին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՁՃԺԹ.ին՝ ի թուականին Հայոց Մեծաց ՌԿԸ.ին... և յետեալս ամենայնի գրել ետու զսեա գիրն Բորոս դպիր գրագրին, և զոսկէ դիրն և զծաղիկսն և զոմանս ի պատկերացն ես իմ հողանիթ մատամբս զծագրեցի... այլ և զանազան գունով ծաղկեցի, և զեղեցկանկար պատկերօք կերպագրել ետու...: Արդ... խնդրեմ ի ձեզանէ որ դիս զնուստ Ղազար Բաբրդացիս յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձերս ևն (էջ 598բ—599ա):

Պետ. Մատենադարանն ունի նաև այս Աստվածաշնչի մի ընդօրինակությունը՝ ձեռ. № 201, որի գրչին է՝ Աստուածատուր քհ. Ջուղայեցի, թվականը՝ 1660, վայրը՝ Շոշ (Սպահան):

Ղազար Բաբրդացու մասին, որը կոչվում էր նաև Վալաքացի, տե՛ս Հ. Գ. Գալեմբարյանի ընդարձակ ծանոթագրությունը՝ Հանդես Ամսօրեայ, 1906, էջ 227: Տե՛ս նաև՝ Հ. Պ. Տեր-Պոլոսյան, «Ղազար վ. Բաբրդացի», անդ, 1966, էջ 17—30, 129—140 (շար.):

⁹⁰ Մենք կոմաներենը բաց ենք թողել՝ հայերեն մասերը համեմատելու համար ընկալալ բնագրի հետ:

բնագրի հարադատությունն էլ կասկածելի է. «Ոչ համարձակիմ երաշխաւոր լինել... ուրեք ուրեք նաեւ բնաբանին անհուպ լինելոյ» (Զոհր. 6): Ղադար Բաբերդացու այս Աստվածաշնչի աղբյուրության տակ գտնվող օրինակներն էին՝ Զոհրապյանի կատարած տուգարությունից համար օգտագործված զրազրերից չորրորդը և հինգերորդը (Զոհր. 6): Նրանից անկախ, բայց նման հանգամանքներ ներկայացնող մի օրինակ էր նաև Զոհրապյանի օգտագործած յոթերորդ զրազրը, որը 1656 թ. ընդօրինակություն էր՝ Հովհաննես զպիր Լեհացու ձեռքով. այս օրինակը ևս դեր չէր խաղում ուրեք ուրեք լարատու անհատատարմութեան՝ մանաւանդ ի նոր Կտակարանի, ուր ի համաձայնելն գրչին զգլխակարգութիւնս ընդ լատինականին՝ երևէր ձեռն միսկ և ի բնաբանն» (Զոհր. 6—7):

Սակայն հայկական թարգմանության խաթարման խոշոր փորձերը Վատիկանի կողմից են արվել: 1637 թ. սեպտեմբերից սկսած Պրոպագանդայի որոշմամբ ձեռնարկումներ են լինում հայկական հին թարգմանությունը համեմատելու Վոլդատայի հետ և սրբագրելու. այս աշխատանքներին մասնակցում են իտալացի երկու հայերենագետ հոգևորականներ՝ Հովհաննես Պիրոմալլին և Պողոս Պիրոմալլին, և երեք հայեր՝ փրանկիսկյան կրոնավոր Գասպարը, դոմինիկյան կրոնավոր Հովհաննեսը և Կ. Պոլսի հայոց պատրիարք Զաքարիա Վանեցու ներկայացուցիչ Հովհաննես Անկյուրացին, որը լատինական անվամբ կոչվում էր Հովհաննես Մոլինոս⁸¹: Հայտնի է, որ այս աշխատանքների արդյունքը եղել էր նոր Կտակարանի համեմատությունից անկախ ավարտումը 1639 թ. մարտին⁸², բայց Հին Կտակարանի մասին տեղեկություններ չունենք:

Այնուամենայնիվ Վատիկանի կատարած այդ ձեռնարկումները որոշ արդյունքներ տվին հետագայում Պողոս Պիրոմալլիի ջանքերով: Վերջինս 1642—47 թթ. էջմիածնում ժանդարություն հաստատելով Ոսկան Երևանցու հետ, նրան գաղափարակից ու դործակից է դարձնում իրեն: Այդ մասին Հ. Միք. Չամչյանն ասում է.

«Եւ յայսմ նուագի՝ յորժամ ի Հայս էր Պողոս կրօնաւոր, գտեալ զՈսկան վարդապետ՝ խօսեցաւ ընդ նմա վասն սրբագրութեան Աստուածաշնչին. յայնժամ վերստին բաղդատութեամբ յաւելին երկրքին նոքա այլ ևս փոփոխութիւնս, և խանգարեցին բազում

ուրեք զվայելչութիւն շարագրութեանն. ուրեք ուրեք և գմիտս բանին, այլազգ իմանալովս»⁸³, հանգարված այս բնագիրը 1666/68 թթ. տպագրութեամբ լույս տեսավ Ամստերդամում և հայտնի է Ոսկանի Սատվածաշունչ անունով:

Աստվածաշնչի Ոսկանյան հրատարակությունը, որպէս ապագրական գործ, մեծ դավաստի է արժանացել, բայց բնագրական տեսակետից շատ է քննադատվել:

Բնագրի մասին խոսելով՝ Չամչյանն ասում է, որ Ոսկանը «նախ՝ թարգմանեաց ի լատինէ ի հայս այլատարազ իմն շարագրութեամբ զգիրս Զորրորդ Եղրասայ և զգիրս Յեսուայ որդու Սիրաբայ», «այլալեւաց և դրանս Աստուածաշնչին՝ բաղդատելով զայն ընդ լատինականին. և այս այն է՝ զոր արար ընդ Պողոս կրօնաւորի լատինացոյ», «փոփոխեաց զշարագրութիւնս իւրաքանչիւր գրոց ըստ նոր ոճոյ ոմանց, բաց ի Սաղմոսն. թէպէտև յայն ևս հասոյց ձեռն. որով և եզձաւ քաղցրութիւն բերթուածոց նոցին»⁸⁴:

Զոհրապյանը ևս նույնպիսի գնահատական ունի Ոսկանի մասին. «Աստուածաշունչ իւր՝ ըստ իմաստիցն ձեւացաւ խառնարան այլ և այլ թարգմանութեանց՝ հելլենականին և լատինականին. իսկ ըստ բերթողական արուեստին՝ խառնաձայնութիւն նախնի հայկական վայելչաբանութեան՝ ընդ նորահնար օտարալուր բարբառոյ: Թողում և զոր ողջոյն զիրս Սիրաբայ՝ և Զորրորդ Եղրասայ՝ հանդերձ Թղթով ինչ Երեմիայ՝ մարգարէի, իբրև ամբողջական մասունս՝ թարգմանեալ ի լատինականէն՝ իւրովն իսկ թերուումն հատուցեալմբ բարբառոյն այնորիկ, յաւել ի մերս խուժադուժ հաւկարանութեամբ» (Զոհր. 8):

Այսպես և ուրիշ քննադատներ, որոնք նախանձախնդիր են եղել հայկական բնագրի անաղարտությանը:

Մենք Ոսկանյան Աստվածաշնչի բնագրի մասին նախորդ էջերում փաստորեն հայտնեցինք մեր կարծիքը՝ Հեթում Բ-ի գրադիր Աստվածաշնչի մասին խոսելիս, ապացուցելով, որ վերջինս Ոսկանյան հրատարակության նախագաղափար օրինակը չէ: Բայց միաժամանակ պիտի ավելացնել, որ Ոսկան Երևանցին օգտագործել է Հեթում Բ-ի օրինակը:

Ոսկան Երևանցու ուղղակի վկայությամբ մեզ հայտնի է դառնում, որ նա Հեթում Բ-ի գրադիրն օգտագործել է ոչ ուրպես նախագաղափար՝ իր հրատարակության համար, այլ

⁸¹ Հ. Գ. Գալմբյաբյան, «Հայ Աստուածաշունչի տպագրութեան ջանքեր Ոսկանէն յառաջ», Հանդէս Ամստերդամ, 1914, էջ 14:

⁸² Անդ, էջ 14:

⁸³ Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. 9, Վեներիկ, 1786, էջ 621:

⁸⁴ Անդ, էջ 660:



որպես ճիմֆ՝ իր սեփական բնագիրը կազմելու համար:

1668 թ. Ոսկան Երևանցին ամբողջական Աստվածաշնչի հետ միաժամանակ լույս էր ընծայում նաև Նոր Կտակարանն առանձին, որի հիշատակարանում նա բացատրում էր, որ ինքը տպագրության համար իր ձեռքով պատրաստել էր (սիմով ձեռամբ գծեալ) մի բնագիր (սբուն նախագաղափար)՝ այդ բնագրի հիմքը (սորբագրութեան գաղափար)՝ Հեթում Բ-ի գրչագրից արտագրված մի օրինակ էր (սգլնի Հեթումյ թագաւորին աստուածաշունչ, կարդա՝ աստուածաշնչին), որի վրա նա կատարել էր բնագրական սրբագրութիւններ (սի ստուգաբանութիւնս աշխատեալ)։ այդ սրբագրութիւնների համար նա վստահելի աղբյուր էր համարել լատինական Աստվածաշունչը (հայաստացոցի զաղափար)։ դրա հիման վրա սրբագրել էր թե՛ բառեր և թե՛ նախադասութիւններ (սթէ՛ առ բառս և թէ՛ առ բանս)։ այդ օրինակի վրա նա կատարել էր նաև լեզվական-քերականական բազմաթիվ ուղղումներ (սթէ՛ ըստ քերթողականի արհեստի՝ և թէ՛ գրչութեան արհեստի), և այլն, Բայց այս փաստերը տեսնենք նույնինքն Ոսկան Երևանցու շարադրությամբ.

«Շնորհօք և օծանդակութեամբ... Արդ՝ հանդիպողացդ սմին ընթերցմամբ կամ ստացմամբ հայցեմ բազմաւ աղերսիւ, անմեղադիր լինիլ սղալանացն, զի ըստ կարի ջանացաք ի սրբագրելն՝ թէ՛ բառ քերթողականի արհեստի և թէ՛ գրչութեան արհեստի, թէ՛ առ լծորդս, և թէ՛ առ հոլովս անուան և բայի, և թէ՛ առ թիւս նոցունց, առ նախադրութիւնս և առ պարագայս նոցունց և դիտաւորութիւնս. նաև ի ստուգաբանութիւնս աշխատեալ՝ որոյ բուն նախագաղափար լեալ է իմով ձեռամբ գծեալ Նոր Կտակարան՝ սգլնի Հեթումյ թագաւորին աստուածաշունչ սրբագրութեան գաղափար՝ առ սոսայն հաւաստացոցի զաղմասականն պարգաբանող գաղափար՝ թէ՛ առ բառս և թէ՛ բանս, զի մի՛ երկրայական թիւրութիւն ինչ ի ներս անկցի, որպէս գոյ բնառեալ ի մէջ դրոց մերոց ի գրչաց անհմտից և անվարժից» և այլն⁸⁵.

Այս հիշատակարանից անտարակուսելիորեն պարզվում է, որ Ոսկան Երևանցին արքայական Աստվածաշնչի ընդօրինակութիւնն (սորբագրութեան գաղափար)՝ օգտագործել է պարզապես իր սեփական բնագիրը (սբուն նախագաղափար) կազմելու համար։ Եվ այս բնագիրն է, որ նա հրատարակել է:

Այստեղ մենք արդեն կարող ենք որոշակիորեն ասել, որ Աստվածաշնչի հայերեն դասական թարգմանության բնագիրը և Ոսկանյան բնագիրը որակապես տարբեր բնագրեր են:

Ժամանակին, անդրադառնալով արքայական Աստվածաշնչի և Ոսկանի հրատարակության աղբյուրի խնդրին, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը գրել է.

«Հեթումի Աստուածաշունչը մենք գտնում ենք ծայրէ ի ծայր սրբագրուած ու փոփոխութիւնների ենթարկուած մի օտար գրչով, որ լուսանցքներում համաբարբառ է աւելացրել, տողամէջ սրբագրութիւններ արել, տնտնել ե այլն: Այդ գրիչն անշուշտ ուրիշ մեկը չէ, բայց եթէ Ոսկան. շատերի կողմից նկատողութեան է առնուել արդէն և երբեմն չափից աւելի խստութեամբ դատապարտուել Ոսկանի հրատարակութեան գլխաւոր թերութիւնը, որ նա լատիններէն թարգմանութեան հետեւելով՝ աղճատել է շատ տեղ ձեռքում ունեցած հայերէն օրինակը և կամայական փոփոխութիւններ մտցրել նորա մէջ: Այդ փոփոխութիւններն ահա նա արել է բուն ձեռագրի վրա՝ պատրաստելով ու յարմարեցնելով այն տպագրութեան համար, և բոլոր նորա անտեղի սրբագրութիւնները մտել են ի հարկէ տպագրի մէջ»⁸⁶.

Ավելացնենք, որ Ոսկանի սրբագրութիւնները գրչագրի վրա՝ թեև շատ են, ինչպես ասում է հոգևածագիրը, բայց և դեռ բոլորը չեն. ճիշտ չէ նաև այն, թե Ոսկանը «բաւական զգուշութեամբ է շարժել» (վարվել) իրեն հիմք ծառայող գրչագրի հետ և թե «միայն արտաքին տառական սրբագրութիւններ է արել, կամենալով միակերպութիւն մտցնել նոյն խօսքի զանազան ընթերցութեան մէջ և ուղղել այն սխալները, որ կարծում էր, թէ գրչագիրներից են»⁸⁷. Մեր կատարած համեմատութիւններից պարզվում է, որ Ոսկանի կատարած լեզվական և մանավանդ բնագրական-իմաստային նշանակութիւն ունեցող սրբագրութիւններից շատ-շատերը չեն երևում Հեթումի գրչագրի վրա:

Ոսկանյան բնագիրը հետզհետե տարածվեց Աստվածաշնչի մի քանի նոր հրատարակութիւններով՝ Կ. Պոլսում (1705 թ.), Վենետիկում (1733 թ.), Պետերբուրգում (1817 թ.) և Սիրամպուրում (1817 թ.): Դեռ չենք հաշվում Հին և Նոր Կտակարանների առանձին մասերի զանազան հրատարակութիւնները, որոնք Ոսկանյան Աստվածաշնչից էին գալիս:

⁸⁵ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյան, «Աստուածաշունչի նոր հրատարակութիւնը», Արարատ, 1902, էջ 1070—1071.

⁸⁶ Անդ, էջ 1071.

⁸⁵ Տե՛ս՝ «Նոր Կտակարան», Ամստերդամ, 1668, էջ 933—934.

Ոսկանյան բնագրի հետևողությամբ խանդարման էր ենթարկվել նաև Ճաշոց գիրքը: Թաղեոս երեց Համադասպյանը 1686 թ. Վ. նետիկում հրատարակել էր Ճաշոցը՝ իրեն բնագիր ընտրելով, ինչպես ինքն էր ասում, Հեթում Բ-ի ձեռագիր Ճաշոցը, դրված 1286 թ.⁸⁸: Կասկած ունենալով Թաղեոս երեցի հավատարմության նկատմամբ՝ Զոհրապյանը գրում էր, որ նա «ոչ սակաւ աշխատութեամբ կարծեմ յարմարեալ դայնչափ ընթերցուածսն՝ ըստ Ոսկանեանն գաղափարի՝ աղաւղեալ զթագաւորականն ազնիւ օրինակ» (Զոհր. 7): Հետագայում էջմիածնի միաբան Վահրամ վրդ. Մանկունին, որը Վաղարշապատում Ճաշոցի նոր հրատարակություն է կատարել՝ իրեն բնագիր ընտրելով Հեթում Բ-ի նույն ձեռագիր Ճաշոցը, իր առաջարկում հաստատում էր այն, ինչ որ միայն ենթադրել էր Զոհրապյանը, հիշեցնելով, որ «Ճաշոցքն տպագրեալք մինչև ցայժմ՝ համաձայն էին առհասարակ Աստուածաշնչին խանդարելոյ ի տեղիս տեղիս վրիպական սրբագրութեամբք Ոսկանայ վարդապետի Երեանցուն»⁸⁹:

Համեմատելով Ճաշոցի արքայական ձեռագիրը 1686 թ. հրատարակության հետ՝ մենք ևս հաստատեցինք, որ վերջինում իշխում են Ոսկանյան բնագրի ընթերցումները:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՐԶԱՆՈՐ

Սակայն հայկական բնագրի անադարտության հարցը, որն անխուսափելիորեն պիտի զբաղեցնեք հաջորդ սերունդներին, շատերի նախանձախնդիր մտահոգության առարկա դարձավ:

Մխիթար Սեբաստացին, 1733 թ. նորից հրատարակելով Աստվածաշունչը, թեև Ոսկանյան բնագրի վերարտադրությունն էր տալիս, բայց միաժամանակ քննական որոշ վերաբերմունք էր ցուցաբերում այդ գործում: Իր ձեռքի տակ ունենալով մի քանի գրչագիր օրինակներ, նա, ինչպես ասում է իր հրատարակության վերջաբանում, Հին և նոր Կտակարանների բնագրում ուղղակի սրբագրել է ժամանակի ընթացքում գրչական աղավաղումների ենթարկված մասերը Օրինակ՝ Յես. Դ. 4 տան մեջ Ոսկանն ուներ՝

⁸⁸ Հեթում Բ-ի համար ընդօրինակված այդ ձեռագիր Ճաշոցն այժմ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում՝ 979 համարի տակ: Ընտիր օրինակ է: Գրչության թվականը՝ 1286 է, բայց գրիչն ու վայրը հայտնի չեն: Ունի հոյակապ մանրանկարներ, որոնք վերագրվում են Թորոս Ռոսլինին:

⁸⁹ Մանկունու հառաջարանը, տե՛ս՝ «Ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցոյ», Վաղարշապատ, 1872, էջ Գ:

Աճեցոյց տէր զմեսու առաջի ամենայն ազգին Իսրայէլի. և երկնչէին ի Մօսիսէ՝ որչափ ժամանակս և եկեաց (Ոսկ. Ա 218—9):

Մխիթար Սեբաստացին բնագրում ուզում է կատարել՝

Աճեցոյց տէր զմեսու առաջի ամենայն ազգին Իսրայէլի. և երկնչէին ի մամէ՛ որպէս ի Մօսիսէ՛՝ որչափ ժամանակս և եկեաց⁹⁰:

Այսպես նաև՝ Մտա. ԻԳ. 32. Ոսկանը բացահայտ աղավաղմամբ ուներ՝

Եւ դուի ցիւփ զչափ հարցն ձեռոց (Ոսկ. Բ 461):

Մխիթարի հրատարակության մեջ ուղղված է՝

Եւ դուի ցիւփ զչափ հարցն ձեռոց⁹¹:

Այս սրբագրությունները համապատասխանում են մեր ձեռագրերի տվյալներին, բայց դրանց թիվը հավանաբար շատ մեծ չէ:

Բացի այսպիսի սրբագրություններից՝ Մխիթար Սեբաստացին նաև բնագրական բազմաթիվ դիտողություններ է նշանակել իր հրատարակության լուսանցների վրա՝ առանց փոփոխելու Ոսկանյան բնագիրը: Այդ դիտողությունները, որոնց նպատակը նույնպես եղել էր պարզել հայկական բնագրի կրած գրչական աղավաղումները, ներկայացնում էին 1645 թ. Փարիզում հրատարակած յոթընեւեզվյան Աստվածաշնչի հետ կատարված համեմատությունները, որոնք, ինչպես երևում է, երբեմն տալիս էին և ո՛չ արհամարհելի արդյունքներ: Օրինակ՝ Դ Թագ. 2. 26 տունն ունի մի այսպիսի անիմաստ ընթերցում:

Եւ ւարկ ասաօի նոցա խոտս տակաւ մեծաւ (Զոհր. 235):

Այսպես է Զոհրապյանի օգտագործած ձեռագրերում և մեղ ծանոթ բոլոր ձեռագրերում. այսպես է նաև Ոսկանի մոտ, այն տարբերությամբ, որ նա արկ բառը սրբագրել է և դարձել էարկ (Ոսկ. Ա 378): Այստեղ, սակայն, խոսքը խոտս տակաւ աղավաղ բառերի մասին է: Մխիթար Սեբաստացին, նախադասությունը Ոսկանից առնելով հանդերձ, ուղղում է առաջարկել՝ լուսանցում ավելացնելով այսպիսի նշում: Սեղանս խոտակաւ մեծաւ⁹², և այդ մասին խոսել է իր վերջաբանում⁹³:

Ձեռագրական հիմքեր չունեցող այսպիսի ձշտումները դիտողությունների ձևով թողնելով լուսանցներում՝ Մխիթարը ղդուշավորում:

⁹⁰ «Աստուածաշունչ գիրք», Վենետիկ, 1733, էջ 194:

⁹¹ Անդ, էջ 954:

⁹² Անդ, էջ 337:

⁹³ Անդ, էջ 1274:



թյուն էր հանդես բերում. բայց տվյալ դեպքում նրա մատնանշած ուղղումն այնքան ուշագրավ էր, որ Պետերբուրգում 1817 թ. տպագրված Աստվածաշնչում, որը Մխիթարի հրատարակությունից է արտատպված, անվարան մուծվել է բնագրի մեջ:

Նույնպիսի աստիճանից սեղանն իտալական է:

Ձեռագրական տվյալների վրա չհենվող այս դիտողությունը, որը վերաբերում է ոչ թե Ոսկանի բնագրին, այլ առհասարակ հայկական դասական թարգմանության ձեռագրերին, իրավամբ ուշադրության արժանի է համարվել Հայկադյան Բառարանի հեղինակների կողմից⁹⁴:

Մխիթար Սեբաստացու բնական այս վերաբերմունքը հայկական թարգմանության բնագրական հարցերում, որպես հետևողական գիծ, երևում է Աստվածաշնչի և նրա տարբեր մասերի այն հրատարակություններում, որոնք հետագայում լույս աշխարհ եկան Վենետիկի Մխիթարյանների ջանքերով:

1752 թ. լույս տեսած Նոր Կտակարանի անվանաթերթերում նշված էր՝ «Տպագրեալ ըստ ուղղագրոյն հին օրինակաց ձեռագրաց»: Դրաբախտաբար՝ կատարված աշխատանքի էություն մասին գաղափար չենք կարողանում կազմել, որովհետև այս տպագրությունը ձեռքի տակ չունենք:

1766 թ. հրատարակված Նոր Կտակարանի հիշատակարանից տեղեկանում ենք, որ տպագրությունը կատարվել էր «ըստ յառաջագոյն տպագրեալ օրինակաց», բայց ենթարկվել էր բարեփոխումների. ինչպես հրատարակիչներն են ասում՝ որոշ պակասներ լրացրել էին. «Որ ինչ ուրեք ուրեք պակաս գայր ի բուն օրինակէն որպէս ցուցանէին գրչագիր օրինակը, և թարգմանութիւնը այլոց լեզուաց, լցուցաք դայնս ի նոցանէ». դրանից բացի՝ որոշ աշխատանքներ էին կատարել լեզվական աղճատումներից բնագիրն աղատելու ուղղությամբ. «Ի բաղում տեղիս ևս եղաք ըստ ձեռագրաց՝ որչափ հնար էր, մանաւանդ ի հոլովմունս ածական անուանց. իսկ յայլ իրս, այսինքն ի խնդրառութիւնս բայից և ի լծորդութիւնս նոցա ի կրաւորական, կամ ի ներգործական, ոչ մերձեցաք ինչ, որպէսդի մի՛ տաղտկալի արասցուք, զոր ինչ յատկութիւն հայկական լեզուին պահանջէ»:

1789 թ. Նոր Կտակարանը նորից են հրատարակում Մխիթարյանները՝ բնագրական

և որ սրբագրություններով: «Վերստին բաղդատեալ ընդ բուն ձեռագիր օրինակաց. — զրված է հիշատակարանում, — սրբագրեցաք ոչ միայն ի սխալանաց սարդիւնոց ի տպագրութիւնս, այլ նաև ուրեք ուրեք՝ մանաւանդ ի թուղթսն Պօղոսի ուղղագրեցաք ըստ ընտրելագոյն ձեռագրաց. յորում մասին թերի գտանէր Նոր Կտակարանն մեր ըստ ձեռագրաց տպագրեալ յամի տեառն 1752, առ նուազութեան ձեռագիր օրինակաց յայնժամ»: Հրատարակիչների մտահոգությունը եղել է ըստ հնարավորին վերացնել այն փոփոխությունները, որ բնագրի մեջ մտցրել էր Ոսկան Երեմիանցին, «որ ի տպագրել զառաջին զԱստուածաշունչ մեր հայկական՝ ընդդէմ հաւատարմութեան ըստ հաճոյից ձեռներէց եղև այլայլել բաղում ուրեք բացի շարագրութենէն և զբնաբանսն իսկ՝ իբր ուղղագրելով և համաձայնելով թարգմանութեան Աստուածաշնչին և տիեզերացոց, թերևս սխալական և թերի համարեալ դմերն, որ սքանչելի յօրինուածով թարգմանեալ է ի նախնաց անտի մերոց ի Յունական բնագրէ»: Այնու ամենայնիվ զգուշավորությունը նրանց դեռ թույլ չի տալիս մի անգամից քարուքանդ անել ամեն ինչ, այնպես որ Հովհաննու Ա թղթում կատարված հայտնի աղավաղման մասին հիշատակարանում ուշադրություն հրավիրելով և այն քննադատելով հանդերձ՝ բնագրում նույնությամբ թողնում են Ոսկանի մուծած վուլգատյան ձևը, միայն փակագծերի մեջ առնելով տվյալ հատվածը:

Նույն 1789 թ. Մխիթարյանները հրատարակում են նաև Սաղմոսը՝ «ըստ ընտիր օրինակաց», ինչպես նշված է անվանաթերթում:

Կաշկանդումների վերջնական հաղթահարումը վերապահված էր Մխիթարյան հայտնի գիտնական Հ. Հովհ. Զոհրապյանին, որը 1805 թ. առաջին անգամ հրապարակ հանեց հայկական Աստվածաշնչի դասական բնագիրը երկու տարբեր հրատարակություններով՝ միահատոր և քառահատոր: Այս հրատարակության անվանաթերթում նշված էր՝ «նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլ և այլ օրինակաց»:

Հրատարակության նախաբանից տեղեկանում ենք, որ Զոհրապյանի օգտագործած հիմնական ձեռագիրը (Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի ձեռ. № 1) 1319 թ. արտագրված էր, հավանաբար Կիլիկիայում, ԺԳ դարի մատենագիր Գեորգ Սկևռացու օրինակից: Մյուս օրինակները, որոնք որպես օժանդակ են օգտագործել սույնի հետ «ի ստուգաբանութիւն կամ յուղղագրութիւն, և ի լրումն թերութեանցն», էին Աստուածաշնչի (Հին և Նոր Կտակարաններ) ուրիշ 7 օրինակ-

⁹⁴ «Աստուածաշունչ գիրք», Պետերբուրգ, 1817, էջ 310:

⁹⁵ Նոր Բաղդիք Հայկազեան լեզուի», հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 839 (տե՛ս «տակ» բառը):

ներ, Ավետարանների ավելի քան 20 օրինակներ և Գործքի ու Առաքելական թղթերի 14 օրինակներ: Զոհրապյանը այս օրինակների տարբերությունները նշել է տողատալով՝ «ի պէտս մերոց ուսումնասիրաց», շնորհալի նաև հանվան նշանակել Ոսկանյան բնագրի տարբերությունները, որպեսզի նրանք զանազանվեն:

Զոհրապյանի Աստվածաշունչը հայկական դասական բնագրի առաջին քննական հրատարակությունն էր: Զարմանալի է, որ Վենետիկի Մխիթարյաններն իրենց այս հայտնի հրատարակությունից հետո 1816 թ. նորից էին տպագրում նոր Կտակարանը՝ ըստ օրինակի տպելոյ յամին 1789», ինչպես դրոշմոված է դրքի ճակատում. բայց սա ըստ ևրեւիտյթին ոսկանյան բնագրի աղբյուրությունն արտահայտող վերջին հրատարակությունն էր:

Հայկական բնագիրը Զոհրապյանից հետո ունեցավ մի ուրիշ նշանավոր հրատարակիչ ևս՝ հանձին նրա միաբանակից Հ. Արսեն Բագրատունու, որը 1860 թ. նորից լույս ընծայեց Աստվածաշունչը՝ ըստ միաբան վաղմի գրչագրաց մերոց և յոյն բնագրաց: Վերնագրային այս նշումը ցույց է տալիս, որ Բագրատունու հրատարակությունը Զոհրապյանի հրատարակության սոսկ վերարտադրությունը չէր: Թեև Բագրատունին որևէ նախաբան կամ հիշատակարան չի կցել իր հրատարակությանը, բայց նրա կատարած աշխատանքի էությունը չի վրիպել մասնագետների ուշադրությունից: Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, որը հետագայում Աստվածաշունչի բնագրական հարցերով էր զբաղվում էջմիածնում, գտնում էր, որ Բագրատունին, իրեն հիմք ընդունելով Զոհրապյանի հրատարակությունը, վերջինիս լուսանցներում դրոշմվող տարբերությունների և Մխիթար Սեբաստացու հրատարակության դիտողությունների հիման վրա որոշ ուղղումներ էր կատարել, իսկ Յոթանասնից հունարեն բնագրից օգտվել էր իմաստը ճշտելու, նախապատվել ընթերցվածները որոշելու և կետադրության համար. Կարապետ վարդապետի դնահատմամբ՝ Բագրատունին «առաջինն է եղել, որ ըստ դիտական եղանակով ձեռքի տակ եղած օրինակներից մի ընդհանուր բնագիր է կադմել, և իւր ընդարձակ ըմբռնման ու հայերէնի մեծ հմտութեան շնորհիւ. յաջողել է առհասարակ ուղիղը գտնել»⁹⁶:

Պարզ է, որ Զոհրապյանի և Բագրատունու այս հրատարակություններից հետո Ոսկանյան բնագիրը վերջնականապես դուրս եկավ

շրջանառությունից, և դարի մեր թարգմանությունն բնագիրը լույս աշխարհ գալով՝ հաղթականորեն մուտք գործեց գիտության բնագավառում, առարկա դարձավ բանասիրական բաղմապիսի ուսումնասիրությունների, ուսումնասիրությունների, որոնց համար հուսալի արդյունքներ չէր կարող տալ տպահովել Ոսկանյան հրատարակությունը. վկա՝ նույնիսկ միայն այն թյուրիմացությունը, որին դո՛ւ էր դնացել Լակոսլը՝ Հովհաննու Ա թղթի հայտնի հատվածի հարցում, ինչպես նշեցինք վերևում:

Է. ԻՆՉ Է ՄԵՈՒՄ ԱՆԵԼՈՒ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՄԱՆ ԲՆԱԳՐԱՎԱՌՈՒՄ

Հայ դասական բնագրի վերականգնման ուղու վրա, իհարկե, վերջնական հանգրվաններ չեն նաև Զոհրապյանի և նրանից բխող՝ Բագրատունու հրատարակությունները. Բանասերների կողմից պատահական և մասնակի առիթներով հաճախ է նշվել, որ ձեռագրերում գոյություն ունեն բնագրական ավելի հին և ավելի ճիշտ ընթերցումներ: Ներկա հոգվածի նախորդ էջերում, Ժ. Գ. դարի ձեռագրերի հիման վրա, մի քանի տեղ մենք ևս առիթ ունեցանք անուղղակիորեն նշելու, որ Զոհրապյանի հրատարակած բնագրի որոշ մասեր սրտագրության են կարոտում. օրինակ՝ Բ. Թագ. Գ. 33. «Միթէ որպէս մեռանիցի աւերողամ, մեռաւ Աբեններ» նախադասությունը, որը, Զոհրապյանի օգտագործած բոլոր՝ ձեռագրերի համաձայն, բնագրի մեջ է գտնվում, հին ձեռագրերում արտաբնագրային ընթերցում է, լուսանցադրություն է. կամ թե՛ Սաղմ. ԿԳ. 7 տան մեջ Զոհրապյանի հրատարակած բնագրի «պատրաստեցան» բառը, որը նրա օգտագործած ձեռագրերի միակ ընթերցվածն է, հին ձեռագրերում «սլարտասնդան» է (տե՛ս վերևում, էջ 81—82 և 87): Եվ հին ձեռագրերի հիման վրա առաջացող այս ճշտումներն արդարանում են հունական բնագրի համեմատություններով:

Անտարակույս Զոհրապյանի հրատարակած բնագրի նմանօրինակ թերությունները լուրջ արդյունք են այն իրողության, որ նա, զրոքախտարար, ձեռքի տակ չի ունեցել հին և ընտիր օրինակներ: Ինչպես նշեցինք՝ նրա օգտագործած ձեռագրերի մեջ հնադույնը, որի վրա և հենվել է, 1319 թվականից էր. Ուստի և հասկանալի է, որ հայկական բնագրի վերականգնման գործում բանասիրությանը դեռ մնում են անելիքներ, և այդ գործը դերադանցապես կապված է հին և ընտիր ձեռագրերի ուսումնասիրության հետ:

Հայտնի է, որ այսօր աշխարհի գլխավոր դատենագրարաններում՝ Երևանում, Երուսա-



⁹⁶ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյան, «Աստվածաշունչի նոր հրատարակությունը», էջ 107—107:

ղեմում, Վենետիկում, Վիեննայում, Փարիզում, Բեռլինում, Հոռմում, Լոնդոնում, Օքսֆորդում և այլուր, որտեղ հայերեն ձեռագրեր են պահվում, ինչպես նաև մասնավորների մոտ, գտնվում են Հին և Նոր Կտակարանների ամբողջական և մասնակի (Սաղմոսարաններ, Ավետարաններ, առաքելական թղթեր և այլն) օրինակներ, որոնց թիվը, զանազան գրչագիր ժողովածուներում պահպանված բեկորների հետ միասին, հազարների է հասնում: Հույժ կարևոր խնդիր է աշխարհով մեկ ցրված այդ ձեռագրերի մեջ որոնումն ու որոշումը այն հնագույն ու լավագույն օրինակների, որոնց միջոցով հնարավոր կլինի երևան բերել հայկական թարգմանության բուն՝ Սահակ-Մեսրոպյան բնագրական նկարագիրը, որը որոշ չափով եղծվել ու աղավաղվել է դարերի ընթացքում ընդօրինակությունների միջոցով:

Այդպիսի հին և ընտիր գրչագրերից մի քանիսն արդեն վաղուց է, որ ուշագործվում են գրավել: Այդպիսիների շարքում համարվվում է Մոսկովյան իրաւագրական ձեռարանի մագաղթյա երկաթագիր Ավետարանը, որը գրված է 887 թ. և այժմ գտնվում է Երևանում: Մեծ է այս ձեռագրի գիտական նշանակությունը, ժամանակին Մսեր Մսերյանցը հրատարակել է համեմատական մի փոքր ցուցակը բնագրական այն տարբերությունների, որ այս գրչագիրը ներկայացնում է Ամստերդամի 1698 թ. և Վենետիկի 1805 թ. տպագրությունների նկատմամբ⁹⁸. բայց նա կազմած ուներ նաև այդ ձեռագրի ամբողջական համեմատությունը, որը մնում է անտիպ, այսպիսի վերնագրով. «Համեմատություն Աւետարանաց, այն է՝ տպագրելոցն յԱմստերդամ յամին 1698 և ի Վենետիկ յամին 1805, ընդ գրչագրին գաղափարելոյ ի թուրին Հայոց ՅԼԶ»⁹⁹, Հետագայում Միհրան Հովհաննեսյանի հրապարակած տեղեկությունների համաձայն Երուսաղեմի մատենադարանի մագաղթյա երկաթագիր Ավետարանը պիտի ավելի հին լիներ, քան Լազարյան ձեռարանինը, նրա գրություն տարի համարելով

602 թվականը¹⁰⁰. բայց Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանը համարել է, որ այս գրչագիրը է առանձին հաւանականութեամբ աւելի հին քան Լազարյան ձեռարանի ձեռագիրը, թէև դժուարանում ենք գարը որոշելու¹⁰¹. Անտոնյան միաբանության Օրթագյուղի (Կ. Պոլիս) մատենադարանի մագաղթյա հին Ավետարանը ըստ ոմանց, և հավանաբար, գրված է 716 թ., ուստի և սա ևս ավելի հին է համարվել, քան Լազարյան ձեռարանինը¹⁰², Իսկ Ն. Ադոնցի քննությունները կարծես հաստատում են, որ Մլքէ թագուհու հայտնի Ավետարանը, որը գտնվում է Վենետիկում, 25 տարով ավելի հին է, քան Լազարյան ձեռարանի Ավետարանը՝ գրված լինելով 862 թ.¹⁰³, Հ. Բ. Սարգիսյանը Մլքէի Ավետարանի որոշության ժամանակը գնում էր 851—922 թվականների միջև¹⁰⁴.

Հիշյալ ձեռագրերի գրություն ժամանակի մասին հայտնված կարծիքները գուցե և որոշ առարկությունների ենթակա լինեն, բայց Լազարյան Ավետարանն ունի անառարկելի թվագրություն, ուստի և Գարեգին կթղ. Հովսեփյանը նրա մասին գրել է. «Այս Աւետարանը թուականով մեզանում մինչև այժմ յայտնի ամենահին ձեռագիրն է»¹⁰⁵.

Սակայն մի կողմ թողնելով հնության ախտյանության իրավունքը՝ նշենք, որ այսօր գոյություն ունեն հին ու ընտիր գրչագրամբ բնագրական տեսակետից արժեքավոր ձեռագրեր, որոնց մասին կարելի է մի ընդհանուր գաղափար կազմել՝ Երևանի, Երուսաղեմի, Վենետիկի և Վիեննայի հայտնի մատենադարանների տվյալների հիման վրա:

Նախ նշենք Աստվածաշնչի ԺԳ և ԺԴ գրքերի մի շարք ամբողջական օրինակներ, նկա-

⁹⁸ Տե՛ս նրա լուսատիպ հրատարակությունը. «Աւետարան ըստ Թարգմանութեան Նախնեաց մերոց, դրեալ յամի 812 թ. Հայոց և յամի տեառն 887: Լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան ձեռարանի Արեւելեան Լեզուաց: Արդեամբք պատուով հոգարարձու ձեռարանիս՝ իշխան Սիմէօնի Արամէլիք-Լազարեան: Մոսկուա, ՌՅԽԸ—1899»:

⁹⁹ Մ. Մսերյանց, «Զհանդամանաց հնագոյն գրչագիր Աւետարանին՝ որ գտանի ի Մատենադարանի Լազարեան ձեռարանի», Փարս, տետր Ե, 1876, էջ 28—39:

¹⁰⁰ Հմմտ. անդ. էջ 39: Մեզ հայտնի չէ, թե այժմ ուր է գտնվում Մ. Մսերյանցի այս թանկարժեք երկը:

¹⁰⁰ Մ. Հովհաննեսյան, «Հնագոյն Աւետարանը», Բիւրակ, 1900, № 30, էջ 459: Նույն, «Հնագոյն գրչագիր Աւետարանը», անդ, № 38, էջ 595—597: Նույն, «Հնագոյն հայ գրչագիրն», Բաճաւէր, 1900, էջ 117—118:

¹⁰¹ Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյան, «Հնագոյն Աւետարան Երուսաղեմայ Հայոց Ս. Յակոբայ վանուց», Բազմավէպ, 1908, էջ 103—109:

¹⁰² Սկսնակ քանասեր, «Օրթագիւղի Անտոնեան միաբանութեան հինաւորաց մագաղթեայ Աւետարանն», Բազմավէպ, 1897, էջ 497—499: Մ. Հ. Սերյան, «Անցք որ անցին ընդ հինաւորաց մագաղթեայ Աւետարանն Անտովնեան հարց», Բազմավէպ, 1901, օգոստ. 15-ի հավելված, էջ 13—15:

¹⁰³ Ն. Ադոնց, «Մլքէի Աւետարանի գրութեան տարին», Սիւն, 1936, էջ 274—275:

¹⁰⁴ Հ. Բաւսեղ Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Ա, Վենետիկ, 1914, էջ 373—392:

¹⁰⁵ Գարեգին կթղ. Հովսեփյան, «Թիշտակարանք ձեռագրաց», հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 86:

տի ունենալով, որ առայժմ ավելի հնե հայտնի չեն, Երևանի հնագույն օրինակը՝ № 194 ձեռագիրը 1207 թվականից է. դրանից հետո հերթականորեն գալիս են № 178 (1253—55 թթ.), № 4243 (1263 թ.), № 172 (1269 թ.), № 345 (1270 թ.), № 1500 (1272—88 թթ.), № 195 (1284—88 թթ.), № 177 (1292 թ.), № 179 (1292 թ.), № 180 (1295 թ.), № 181 (1295 թ.), № 182 (1303 թ.), № 183 (1308 թ.), № 353 (1317 թ.), № 206 (1318 թ.), № 2627 (1338 թ.), № 2705 (1366 թ.), № 352 (1371 թ.), № 346 (1390—1400 թթ.) և № 184 (1400—1401 թթ.): Վենետիկն ունի միայն երեք ձեռագիր՝ № 1 (1319 թ.), № 12 (1332 թ.) և № 8 (1341—55 թ.): Միայն երկու ձեռագիր է մեզ հայտնի Երուսաղեմից՝ № 146 (1214 թ., թերի) և № 153 (1323 թ.). և երկու ձեռագիր էլ Վիեննայից՝ № 71 (ԺԳ—ԺԴ դդ.) և № 55 (1368—75 թթ.):

Ավետարանի ձեռագիր օրինակները թե՛ բրնձրային ավելի հին են և թե՛ թվով ավելի շատ, քան Աստվածաշնչի ամբողջական օրինակները, Որպես Թ—ԺԱ դարերից հասած օրինակներ՝ կնշենք հետևյալները: Երևանի հնագույն օրինակը, գրված 887 թ., նախկին Լաղարյան Ավետարանն է, որն այժմ կրում է 6200 թվահամարը. այնուհետև ունենք՝ № 10110 (Թ—Ժ դդ.), № 6384 (902 թ.), № 7737 (965 թ.), № 7735 (986 թ.), № 2374 (989 թ.), № 7739 (1001 թ.), № 4804 (1018 թ.), № 283 (1033 թ.), № 6201 (1038 թ.), № 3723 (1045 թ.), № 3793 (1053 թ.), № 3784 (1057 թ.), № 311 (1066 թ.), № 275 (1071—78 թթ.) և № 288 (1099 թ.): Վենետիկի հնագույն օրինակը Մլքե թագուհու վերոնշյալ Ավետարանն է, որը գրված է համարվում 851—922 թթ. միջև և կրում է 86 թվահամարը. դրանից հետո ժամանակագրական կարգով գալիս են՝ № 103 (Թ—Ժ դդ.), № 123 (նույնպես), № 116 (1007 թ.) և № 108 (Ժ—ԺԱ դդ.): Երուսաղեմի մատենադարանից մեզ հայտնի է միայն № 2555 ձեռագիր Ավետարանը, որը Ժ դարի շրջություն է, իսկ Վիեննայի մատենադարանն ունի ԺԱ—ԺԲ դարերի գրություն համարվող երկու Ավետարաններ՝ № 608 և 1031:

Թե՛ ամբողջական Աստվածաշնչերի և թե՛ Ավետարանների մեջ կան նաև հետագա գաղերի մի շարք ընդօրինակություններ, որոնք ունենալ են հին և ընտիր նախագաղափարներն ունեցել: Այդպիսիներից է եղել, օրինակ, Լեկյուրիայի Կարմիր վանքի № 45 ձեռագիր Աստվածաշունչը, որի նախագաղափար օրինակը 986 թվականից էր:

Աստվածաշնչի տարբեր մասերի հին ընդօրինակությունների նմուշներից են նաև Երե-


վանի ձեռ. № 3845՝ Պողոս առաքյալի թղթերը (1173 թ.), Երուսաղեմի ձեռ. № 326՝ Հայտնության գիրք (1199—1202 թթ.), Փարիզի Ազգային Մատենադարանի հայ. ձեռ. № 27՝ Նոր Կտակարան՝ առանց Ավետարանների (ԺԲ դ.), և այլն: Կան նաև ավելի հին գրություն ունեցող Սաղմոսարաններ:

Պարզ է, որ, ձեռքի տակ ունենալով ձեռագրական այսպիսի հարուստ ժառանգություն, հայ բանասիրությունն այսօր հայկական թարգմանության բնագիրը վերականգնելու համար լայն հնարավորություններ ունի շարունակելու և ավարտին հասցնելու այն դործը, որ սկսել էր Զոհրապյանը: Եվ իրոք այդ ձգտումն է, որ արտահայտվում էր անցյալ դարի վերջերին էջմիածնի վանքում, Աստվածաշնչի քննական նոր բնագիր պատրաստելու աշխատանքներով: Աստվածաշնչի ձեռագրերի մեծագույն և հնագույն մասը կենտրոնացած էր էջմիածնի Մատենադարանում (այժմյան Երևանի Պետ. Մատենադարան), ուստի և պատահական չէր, որ այդ նպատակի իրացմանը որոշել էին ձեռնամուխ լինել էջմիածնի միաբանության գիտնական անգամները: Դեռևս 1890-ական թվականներին կատարվող նախապատրաստական աշխատանքների մասին արձագանքում էր մամուլը¹⁰⁶, Նղիա վրդ. Հասան-Ջալալյանցը էջմիածնի Մատենադարանում Աստվածաշնչի ձեռագրերի համեմատության աշխատանքներ էր կատարում¹⁰⁷, 1900-ական թվականներին այդ աշխատանքներն ստացել էին նոր թափ: 1902 թ. հրիմյան Հայրիկը Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանին պաշտոն էր հանձնել՝ էջմիածնի Ծեմարանի ուսումնավարտ և ուսանող սաների գործակցությամբ հրատարակության պատրաստել Աստվածաշնչի բնագիրը՝ ձեռագրերի համեմատության հիման վրա¹⁰⁸, Զգալի աշխատանքներ էին կատարվել: Մատենադարանի մի քանի տասնյակ ձեռագիր Աստվածաշնչերն իրար հետ համեմատելուց հետո կանգ էին առել հիմնական 8 օրինակների վրա՝ երկրորդական կարգի օգտագործման վերապահելով մյուս օրինակները. դրանց հետ միասին օգտագործվում էին նաև Աստվածաշնչի առանձին գրքերի (Ավետարաններ, Առակաց գիրք, Սաղմոսներ և այլն) ընդօրինակություններ, որոնք հաճախ ավելի հին և ավելի ընտիր օրինակներ են հանդիսանում, ինչպես նաև ծաշոցի նույնպիսի օրինակներ, որոնք Հին և Նոր Կտակարաններից

¹⁰⁶ Հայրենիք, 1894, մարտի 26, № 765.

¹⁰⁷ Արարատ, 1896, էջ 312, ծան.

¹⁰⁸ Այս շրջանի աշխատանքների մասին տե՛ս Կարապետ վրդ. Մեր-Մկրտչյանի տեղեկատվությունը, Արարատ, 1902, էջ 474—477 և 1079—1088.



պարունակում են բազմաթիվ հատվածներ: Ձեռագրական տարբերակների ընտրության համար օգտագործվում էին նաև հունարեն Յոթանասնից բնագիրը և եբրայականը, վերջինս, ըստ երևույթին, հետևողությամբ Աստվածաշնչի՝ Կ. Պոլսի 1895 թ. հրատարակության, ուր նշանակված են եբրայական բնագրի բոլոր կարևոր տարբերությունները: «Բուն օրինակը կազմելու համար,— գրում էր Կարապետ վարդապետը,— մենք վերցրել ենք Կ. Պոլսի վերջին տպագրությունը և աչքի առաջ ունենալով՝ մի կողմից ձեռագիրները տարբերություններն ամփոփող տետրակը և միև կողմից եբրայացեղների բնագիրն ու յունարեն Յոթանասնից թարգմանությունը, սրբագրում ենք՝ տպագրի մէջ դնելով այն ընթերցուածը, որ ամենաուղիղն է երևում ձեռագիրների մէջ՝ նոցա համեմատական արժեքին և բնագրի իմաստին նայած. իսկ իբրև տարբերություն նշանակում ենք միայն այնպիսիները, որոնք պարզ սխալ կամ թիրիմացություն չեն և արժէք կարող են ունենալ կամ իմաստի, կամ հայերէն լեզուի տեսակէտից»: Այնուհետև Կարապետ վարդապետն ավելացնում էր. «Ժմաստը ճշտելու համար մենք նախապատուութիւն տալիս ենք այն ընթերցուածներին, որոնք բնագրին աւելի մօտ են՝ շանելով ի հարկէ ո՛չ մի սրբագրութիւն, նոյնիսկ ակներև սխալների համար, եթէ գտնէ մի ձեռագրի վկայութիւնը չունենանք: Նախկին հրատարակությունների մի կարևոր թերութիւնը հէնց այն է, որ բնագիրն ի նկատի չունենալով և միայն յունարէնի հետ համեմատելով՝ շատ անգամ ընտրել են այնպիսի ընթերցուածներ, որ յունարէնին աւելի մօտ են, բայց նախնականը չեն, այլ ձեռագիրների մէջ սրբագրուած՝ յունարէն իմացողների ձեռքով»:

Այս հիանալի նախաձեռնության արդյունքն այն եղավ, որ 1903 թ. սկզբներին էջմիածնի տպարանից լույս ընծայվեց, որպես նմուշ, Աստվածաշնչի քննական բնագրի առաջին պրակը՝ 1 տպագրական մամուլ ծավալով կամ 16 էջ, որին առանձին կցված էր նաև ձեռագրական տարբերությունների ցուցակը: Այդ նմուշը քննարկման համար ուղարկված էր մի շարք մասնագետների, որոնցից հայտնի բանասեր Զ. Կարապետ Տեր-Սահակյանը¹⁰⁹ և գրաբարագետ Հակոբ Գուրգենը¹¹⁰ օգտակար դիտողություններով ու թեւադրանքներով հանդես էին եկել մամուլում: Դժբախտաբար փորձնական պրակի լույս տեսնելուց հետո այդ աշխատանքները դադարեցին, հայտնի չէ, թե ի՛նչ պատճառներով. և այսօր

ավելի քան 60 տարի է, որ լռություն է տիրում այդ մասին: Նույնիսկ հայտնի չէ, թե կատարված աշխատանքների անտիպ նյութերն ուր են գտնվում այսօր¹¹¹: Եվ սակայն՝ հայկական Աստվածաշնչի բնագրի քննական հրատարակության խնդիրը հայ բանասիրության համար մնում է օրակարգի կարևորագույն խնդիր: Վրացական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիան, ակադեմիկոս Ա. Շանիձեի ղեխավորությամբ, վաղուց է ձեռնամուխ եղել հրատարակելու Աստվածաշնչի վրացերեն թարգմանության քննական բնագիրը՝ որպես վրացերեն լեզվի դասական շրջանի արտագրություն, և Հին ու Նոր Կտակարանների մի շարք դրբեր արդեն լույս են տեսել: Հայկական բնագիրը՝ դասական այն բնագիրը, որը լույս աշխարհ եկավ Ե դարում մեր անմահ թարգմանիչների անդուլ ջանքերով և հանդիսանում է հայ ոսկեդարւան լեզվի թանկագին կոթողը, նույնպես արժանի է հրապարակ գալու իր հարադատ՝ անեղծ ու անաղարտ դիմագծով և, աղատվելով դարերի ընթացքում կրած խաթարումներից ու դրշտական աղավաղումներից, սեփականությունը դառնալու դիտության: Հայկական բնագրի արժանիքը կայանում է ոչ թե լոկ նրանում, որ հայ դասական լեզվի հարստությունների շտեմարանն է հանդիսանում և ունի ազգային մշակույթի առումով խոշոր նշանակություն, այլ և նրանում, որ համաշխարհային մշակույթի ուսումնասիրության համար ունի նույնպես խոշոր նշանակություն, որպես մի թարգմանություն, որն անսահման հնարավորություններ է պարունակում իր հերթին օգնելու վերականգնմանը հունարեն այն բնագրերի, որոնցից թարգմանված է և որոնց բնագրական նկարագիրը նույնպես տուժել է դարերի ընթացքում: Այս վերջին առումով էլ արդեն վաղուց է, որ հայկական թարգմանությունը գրավել էր բանասիրական աշխարհի ուշադրությունը:

Ժէ դարի վերջերին Սորբոնի դոկտորներից Պիլը գտնում էր, որ հայկական թարգմանությունը մեծ ծառայություն կամտուղի հունարեն բնագրերը վերականգնելու¹¹²: Նույն կարծիքին էր և Լակրոզը¹¹³, Հայկական բնագրի

¹¹¹ Երևանի Պետ. Մատենադարանի դիվանական բաժնում մեր կատարած որոնումներն ապարդյուն մնացին: Գուցե այդ նյութերը լինեն Կաթողիկոսական դիվանում, որն այժմ գտնվում է ՀՍՍՀ Պետական Արխիվում:

¹¹² Հմմտ. Aug. Calmet, „Dictionnaire .. de la Bible“, t. I, Petit-Mont-rouge, 1845, p. 871. Հ. Գ. Զարեհաճյան, «Մատենադարան...», էջ 241:

¹¹³ Հմմտ. „Mosis Chorenensis Historiæ Armeniae lib. III“, p. IX-X.

¹⁰⁹ Բազմավեպ, 1903, էջ 343—349.

¹¹⁰ Բիզանդիոն. 1903, մարտի 18, № 1963:

տարբերակներն օգտագործելու փորձեր են կատարել Վիլֆրուան (1775 թ.), Գրիսբախը (1796 թ.), Հոլմեսը (1798 թ.) և հետագայում ուրիշներ¹¹⁴, Պ. Ս. Լուրդեն 1780—90-ական թվականներին հայկական բնագրերը լատիներենի էր թարգմանում՝ նույնտակ ունենալով այն հրատարակել Վալտոնի հայտնի բաղադրվածության Աստվածաշնչի մեջ. այս աշխատանքը, որ հեղինակի մահվամբ կիսատ է մնացել՝ ընդգրկելով միայն Մենդոց գրքից մինչև Մակաբայեցիոց Բ գիրքն ընկած մասերը, այժմ պահվում է Մյունխենում¹¹⁵, Եղեկեն նմանօրինակ ուրիշ ձեռնարկումներ ևս, բայց հայկական բնագրի լատիներեն մի ամբողջական թարգմանություն, որը դեռ մնում է անտիպ, կատարել է վենետիկյան Միսի-

թարյան Հ. Եղիա Թումաճանյանը¹¹⁶, Այդպիսի մի աշխատության հրատարակությունը կասկած չկա, որ մեծ ծառայություն կմատուցեր բանասիրությանը՝ վեր հանելով հայկական բնագրի գիտական անվիճելի արժանիքները:

Այնուամենայնիվ, ինչպես ասացինք, հայկական թարգմանության դասական բնագրի վերականգնման խնդիրը կանգնած է առաջին գծի վրա և մնում է հրամայական ուղահանք, որի իրագործման համար մեր օրերում կան ավելի շատ հնարավորություններ, քան կային մեր դարի սկզբներին: Դրա մասին մեր մասնագետները պիտի մտածեն թե՛ հօգուտ հայրենի գիտության և թե՛ ի շահ ոչ միայն հայհունական, այլև հայ-ասորական և հայ-վրացական մշակութային հնօրյա կապերի ճիշտ լուսաբանման, կապեր, որոնց անխարդախ վկան է հանդիսանալու Սահակ-Մեսրոպյան վերականգնված բնագիրն իր գիտական կերպարանքով:

Հայագիտության հերթական խնդիրներից մեկը պետք է լինի Աստվածաշունչ մատյանի հայ դասական բնագրի վերջնական վերականգնումը:

¹¹⁴ Հմմտ. Գ. Ա. Շուրմախ-Հ. Գ. Պարբեհապյան, «Ուսումնասիրությունը հայ լեզուի և մատենագրության յԱրևմուտք», Վենետիկ, 1895, էջ 91: Հ. Գ. Զարբհապյան, «Մատենագրարան...», էջ 244: Սպամավկա, 1900, էջ 296, 346:

¹¹⁵ Հմմտ. Հ. Գ. Գալեմիսյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Արքունի Մատենագրարանի ի Մյունխեն», Վիեննա, 1892, ձեռ. № 19 և 20:

¹¹⁶ Հմմտ. Հ. Գ. Պարբեհապյան, «Մատենագրարան...», էջ 244:

